

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՎ

1912 թ.

ԾՆՎԱԾՆԵՐԻ ԶՈՐԱԿՈԶՆ

Ա Ն Ց Կ Ա Ց Ն Ե Լ

Գ Ե Ր Ա Զ Ա Ն Ց

ՆՑՈՒԹԵՐ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԵՎԱՆ

1934

29 JAN 2018

Պրովեստարներ բոլոր յերկրների, միացե՛ք

1912

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑ

Ն Յ Յ Ս Ս Ս Ս Ս  
Յ Յ Ս Ս Ս Ս Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑԻ ԳԵՐԱԶԱՆՑ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑԻ ԳԵՐԱԶԱՆՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

1912 թ. ԺՆՎԱԺՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉՆ  
ԱՆՑԿԱՑՆԵԼ ԳԵՐԱԶԱՆՑ

ՆՅՈՒԹԵՐ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՄԵՏՆԱՆ

1934

ՅԵՐԵՎԱՆ

Պատ. խմբագիր՝ Մ. Դավթյան.

Թարգմ. Ա. Այվազյան

Տես. խմբ. Գ. Ջեմյան

Սրբագրող՝ Գ. Հակոբյան.

Հանձնված է արտադրության 13 սպասուսի 1934 թ.

Ստորագրված է տպագրության համար 21 ոգոստովի 1934 թ.

## Թ Ե Ձ Ե Ր

1912 թվականին ծնված քաղաքացիներին հերթական զորակոչը՝ բանվորագյուղացիական Կարմիր Բանակի շարքերը, տեղի չե ունենում միջազգային բարդ պայմաններում, վերին ավելի կարևոր ու պատասխանատու չե դարձնում զորակոչի ամբողջ աշխատանքը:

Չորակոչը մասսայական մի ստորգում է, թե ինչ չափով պատրաստ են աշխատավորներն անձնվիրաբար պաշտպանել ԽՍՀՄ-ն: Նա միևնույն ժամանակ քաղաքական-մասսայական կարևորագույն կամպանիա չե՝ Խորհրդային Միության պաշտպանունակութան և նրա զինված ավանգարդ Կարմիր բանակի ել ավելի ամրացման դործում:

Հերթական հասակն ունեցող քաղաքացիներին բանվորագյուղացիական Կարմիր բանակ էր չվերև հետ կապված աշխատանքը պետք է առավելագույն չափով մտքի լիզացիայի յենթարկի բանվորական ու կոլանտեսական ամենալայն մասսաների ուղադրութունը՝ ԽՍՀՄ-ի միջազգային դրության շուրջը, պատերազմի փոսնոգի աճման, յերկրի պաշտպանունակության ամրացման խնդիրներին և բանվորագյուղացիական Կարմիր բանակի մարտական դրության շուրջը:

Դրավիտ 8678    Կրատ 4011    պատվեր 1263    տիրաժ 1000  
Պետերատի տպարան, Յերևան



1-34589բ

Արդի միջազգային դրուժյան սպառիչ վերբուծումը արված է Համ(բ)Կ. 17-րդ համադրումարում կուսակցության առաջնորդընկ. ՍՏԱԼԻՆԻ տված զեկուցման մեջ: Այդ վերբուծումը արված է նաև Կոմինտերնի Գործկոմի 13-րդ պլենումի վերջումներում:

Վո՞րն է հիմնականը, վո՞րն է նորը միջազգային արդի իրադրության մեջ:

Արդեն հինգ տարի կապիտալիստական յերկրներում տիրող տնտեսական ճգնաժամը, հանդիսանալով բոլոր ճգնաժամերից ամենատեվականը և ծանրը, խիստ սրեց կապիտալիստական յերկրների թե միջազգային և թե ներքին հակասությունները:

«Արտաքին շուկաների համար մղվող պայքարի ուժեղանալը, ազատ առևտրի վերջին մնացորդների վոչնչացումը, արդեյիչ մաքսերը, առևտրական պատերազմը, վալյուտաների պատերազմը, դեմպինգը և ուրիշ շատ նմանորինակ ձեռնարկումներ, վորոնք ցուցադրում են ծայրահեղ նացիոնալիզմ տնտեսական քաղաքականության մեջ, ծայր աստիճան սրեցին յերկրների փոխադարձ հարաբերությունները, հող ստեղծեցին ռազմական ընդհարումների համար և հերթի դրին պատերազմը, վորպես աշխարհն ու ազդեցության շրջանները հողուտ ավելի ուժեղ պետությունների վերաբաշխելու միջոց» (ՍՏԱԼԻՆ):  
Իմպերիալիստական բուրժուազիան արդեն

այլ միջոց չի տեսնում ճգնաժամից դուրս դալու համար, բացի պատերազմից: Կապիտալիստական աշխարհն արդեն ներս է սողում համաշխարհային իմպերիալիստական պատերազմի մեջ (Հեռավոր Արևելք և Հարավային Ամերիկա):

«Նախապատերազմյան իրադրություն բոլոր բնորոշ մոմենտները կան, միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի վիժումը (Վերսալի ու Վաշինգտոնի պարտավորությունների խախտումը), դադանի ու բացահայտ սպառաչիւնումների աճումը, կապիտալիստական յերկրների տնտեսական ու հաստրակական կյանքի ռազմականացումը, քաղաքական ռեակցիայի ուժեղանալը: Տնտեսական պատերազմը, վորպես իմպերիալիստական պատերազմի նախերգանքը, իր յեռուն շրջանումն է: Փաշիզմը՝ իր սանձարձակ շովինիստական պրոպագանդով, նացիոնալիստական վալյրազ մարդատեցության իր քարոզով՝ հողեբանական մթնոլորտ է ստեղծում արյունահեղ սպանդի համար: Սաչակրաց արշավանք է սկսվել կոմունիստների դեմ, մասսայական դրժգոհության արտահայտությունները խեղդում են անողոք դաժանությամբ, բուրժուազիայի դիկտատուրան ավելի ու ավելի տերորիստական բնույթ է

ընդունում, վորը բուրժուազիային հնարավորութիւնն է տալիս ուսակ անել մի անգամ ևս արյունահեղ կոտորածի մեջ նետել ժողովուրդները»

(ՄԱՆՈՒԻԼՄԻ) :

Մի շարք յերկրներում Փաշխտական բացահայտ դիկտատուրա հաստատվելն ավելի յե սրում պատերազմի վտանգը: Փաշխտական Գերմանիան և ռազմա-Փաշխտական ճապոնիան սակապատերազմի յերկու գլխավոր բները և նախաձեռնողները:

Ռազմական համատարած տենդի այդ պայմաններում միմիայն ԽՍՀՄ-ն է, վոր անշեղորեն ու համառորեն խաղաղության քաղաքականութիւնն է վարում, սիստեմատիկաբար մերկացնելով պատերազմի կազմակերպիչներին և ջուրը գցելով նրանց պլանները: Վերջին ժամանակներս ե՛լ ավելի ամբողջով ԽՍՀՄ-ի միջազգային դրութիւնը, ե՛լ ավելի աճեց նրա միջազգային հեղինակութիւնը (չհարձակելու պահտերը, ՀԱՄՆ-ի, Չեխոսլովակիայի և Ռումինիայի հետ դիմանագիտական հարաբերութիւններն հաստատվելը):

Սակայն ԽՍՀՄ-ի դեմ ուղղված հակահեղափոխական պատերազմի վտանգը մնում է վորպես անմիջական վտանգ, վորովհետև կա պիտալիզմի աշխարհի ու սոցիալիզմի աշխարհի հակասութիւնը միջազգային ժամանակակից դրութիւն հիմնական հակասութիւնն է՝ բուրժուազիան ճգնաժամից յելք է փնտռում

նախ և առաջ ի հաշիվ աշխարհիս միակ պրոլետարական դիկտատուրայի յերկրի՝ ԽՍՀՄ-ի դեմ ուղղված հակահեղափոխական պատերազմի մեջ:

Շարունակվող տնտեսական ճգնաժամը խիստ սրեց բանվոր դասարգի ու բուրժուազիայի հակասութիւնները: Գնալով ավելանում է բանվորական լայն մասսաների և աշխատավոր գյուղացիութիւնի դեմոկրատիկ շարժումը հակահեղափոխական բուրժուազիայի քաղաքականութիւնի դեմ: Մի շարք կապիտալիստական ու գաղութային յերկրներում աճում է հեղափոխական ճգնաժամը (Գերմանիա, Սպանիա, Չինաստան, Հնդկաստան, Լեհաստան, Ալխտրիա): Բանվորների ու աշխատավորների լայն մասսաները գնալով ավելի յեն համոզվում, վոր անհրաժեշտ է հեղափոխական յելք ստեղծել ճգնաժամից հեղափոխական ճանապարհով, տապալելով բուրժուազիայի տիրապետութիւնը և հաստատելով պրոլետարիատի դիկտատուրա:

Ժողովրդական մասսաները դեռ չեն հասել այն վիճակին, վոր գրոհ տան կապիտալիզմի վրա, բայց վոր գրոհի գաղափարը հասունանում է մասսաներում, այդտեղ հազիվ թէ տարակույս լինի»

(ՄՏԱԼԻՆ) :

Ծայր աստիճան լարված միջազգային դրութիւնի այդ պայմաններում, այն պայման-

ներում, յերբ չափազանց սրվել է իմպերիալիստական նոր պատերազմների վտանգը և ՆՍՀՄ-ի դեմ ուղղված իմպերիալիստական ինտերվենցիայի իրական, անմիջական սպառնալիքը—1912 թ. ծնվածների զորակոչն ունի քաղաքական հսկայական նշանակություն, վորպես Նորհրդային Միության պաշտպանունակությունն ե՛լ ավելի ամարցնելու կարևորագույն գործոն: Չորակոչը պետք է անցկացվի առավելագույն կերպով կազմակերպված ու հստակ: Այդ է պահանջում կարմիր բանակի արդի վիճակը:

Կարմիր բանակի առաջնորդ ընկ. Վորոշիլովը կուսակցության 17-րդ համագումարում իր ունեցած յեղույթի ժամանակ տվեց պրոլետարական դիկտատուրայի զինված ուժերի ցայտուն, սպառիչ բնութագիրը:

ՆՍՀՄ-ի ինդուստրիալ կարողություն հսկայական աճման շնորհիվ, կարմիր բանակը զինվեց ժամանակակից նոր, հզոր մարտական տեխնիկայով: Ներկայումս կարմիր բանակը հանդիսանում է առաջավոր, տեխնիկապես հիանալի զինված մի բանակ, վորն իր սպառողիները թյամբ չի զիջում կապիտալիստական յերկրները առաջավոր բանակներին: Բանվորագյուղացիական կարմիր բանակն ունի հրաձգային հիանալի զենք (զնդացիր, հրացան, հրետանի), բավական թվով տանկեր,

ավիացիա, կապի միջոցներ, ինժինեռական գույք և այլն:

Մեր բանակը մեքենայացված, մեխանիկացված բանակ է: Այդ բանակը պահանջում է ավելի պատրաստված, գրագետ, ֆիզիկապես մարզված մարդկային կազմ, վորն ընդունակ լինի տիրապետելու մարտական բարդ մեքենաներին, հիանալի կերպով ղեկավարել գրանք, հիանալի կերպով ոգտագործել «գործադրել գրանք ամեն ըոպե, ինչպես հարկն է, վորպես վայել է բանվորագյուղացիական կարմիր բանակին՝ պաշտպանելով պրոլետարական դիկտատուրայի պետությունը» (Վորոշիլով):

Կարմիր բանակի գորակոչի ամբողջ կազմակերպումը, նախապատրաստումն ու իրագործումը պետք է լիովին ապահովի մարդկային կազմին ներկայացվող այդ բարձր պահանջների բավարարումը: Անհրաժեշտ է կարմիր բանակին տալ այնպիսի կոնտինգենտներ, վորոնք ի վիճակի լինեն շատ կարճ ժամանակամիջոցում դառնալ մարտական բարդ տեխնիկայի կուլտուրական, բարձրորակ, հիանալի դաստիարակված ու կրթված վարպետները:

### ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

«Մենք կարող ենք հիանալի զենք շատ ունենալ, բայց յեթե չունենանք մեր իսկական, բուն բանվորագյուղացիական

Կարմիր բանակը, յեթե մեր բանակը բաղ-  
կացած չլինի պրոլետարական հեղափո-  
խութեանը նվիրված, քաղաքականապես  
ամուր կոփված, իրենց գործը լավ խմ-  
ցող հրամանատարներին, քաղաշխատող-  
ներին ու մարտիկներին, — թշնամին կխլի  
մեզանից այդ զենքը, վոչ մի տեխնիկա չի  
ողնի մեզ պաշտպանելու մեր յերկիրը»

### (ՎՈՐՈՇԻՆՈՎ)

Ուստի զորակոչի կարեորագույն խնդիրն  
է՝ ընտրել դասակարգայնորեն կայուն, քաղա-  
քականապես գրագետ լրացում:

Կարմիր բանակը, վորպես պրոլետարա-  
կան դիկտատուրայի բանակ, ունի բացա-  
հայտ դասակարգային բնույթ: Կարմիր բա-  
նակի դասակարգային բնույթը, նրա ինտեր-  
նացիոնալ-դասակարգային բնույթը, վորոչ-  
վում է նախ և սուղ նրա կազմակերպման,  
համալրման ու դաստիարակման սխտեմով:

Կարմիր բանակի մարտիկի պատվավոր  
կոչումը կրելու իրավունքը, զենք կրելու իրա-  
վունքը, մեր յերկրում պատկանում է միմի-  
այն աշխատավորներին: Կուլակները, առևտու-  
րականները, ձայնագուրկները, դասակարգայ-  
նորեն խորթ բոլոր տարրերը տեղ չունեն մեր  
Կարմիր բանակում:

Մակայն անձնական շահախնդրությունին

դրդված, սոցիալիստական հայրենիքի պաշտ-  
պան կարմիր-բանակայինի պատվավոր կոչու-  
մը թշնամաբար ոգտագործելու նպատակով,  
վնասարար աշխատանք կազմակերպելու նպա-  
տակով, դասակարգային թշնամին իր բոլոր  
ուժերով, բոլոր միջոցներով ու յեղանակնե-  
րով, ճարպկութեամբ դիմակալորվելով, խա-  
բելով զորակոչային հանձնաժողովները՝ փոր-  
ձում է թափանցել Կարմիր բանակի շարքերը:

Որինակ՝ զորակոչիկ Գրիգորյեվը, մի  
ձայնագուրկ կուլակ (Մոսկվա քաղաքի Պրոլե-  
տարական ուսյոնը) զորակոչի յեր յեկել կեղծ-  
անձնագրով: Զորակոչիկ Տուրուժեվը մի ու-  
սյոնից վերաբնակվել է մի այլ ուսյոն, միմիայն  
իր ազգանունը փոխելով և բանվորի կոչման  
տակ թաքնվելով, բանվորագլուղացիական  
Կարմիր բանակը թափանցելու համար:

Այդպիսի փաստեր քիչ չեյին անցյալ տար-  
վա զորակոչի պրակտիկայում: Ուստի գորա-  
կոչի կամպանիայի ընթացքում պետք է ա-  
ռանձնապես բարձր լինի դասակարգային գգո-  
նությունը: Այդ պատճառով հատուկ գգուշու-  
թյամբ պետք է մոտենալ ամեն մի գորակոչի-  
կին:

Կոնկրետ կերպով անհրաժեշտ է՝

ա) Ամեն մի ձեռնարկութեան, կոլտնտե-  
սութեան ու խորհտնտեսութեան մեջ ստեղծել  
զորակոչին ոժանդակող հանձնաժողով, ճիշտ

և ժամանակին կազմակերպելով զորակոչիկներին ստուգում:

բ) Ժամանակին կազմել ամեն մի զորակոչիկի բնութագիրը:

գ) Առանձնապես ուշիուշով ստուգել մյուս շրջաններից վերջերս ձեռնարկություն կամ խորհանտեսություն յեկածներին, պահանջելով նրանց բնութագիրն այն շրջանի կոլտնտեսության ու ձեռնարկության կուսակցական և խորհրդային կազմակերպություններից, վորտեղ առաջ աշխատել է զորակոչիկը:

դ) Զորակոչիկների ցուցակը, այն հարցը, թե ով է արժանի և ով արժանի չէ կարմիր բանակայինի կոչումը կրելու, քննարկել բանվորների, կոլտնտեսականների ու համագյուղացիների ընդհանուր ժողովներում, ինչպես և համագյուղացի հայրենակիցների ու միևնույն շրջանից յեկողների ժողովներում (նոր շինարարություններում) և գյուղխորհուրդների պլենումներում:

ե) Զորակոչիկներին ցուցակները կախ տալ աչքի ընկնող տեղերում:

զ) Զորակոչիկներին դասակարգային բնորության շուրջն աշխատավորներին զգոնությունը բարձրացնելու նպատակով, ավելի լայն ոգտագործել մամուլը, բազմատիրափթերթերը, ակումբները, խրճիթ-ընթերցարանները և այլն,

Հիմնական պահանջն է՝ ուշիուշով անհատական մտտեցում ցուցաբերել յուրաքանչյուր զորակոչիկի առումնասիրմանը, վճռաբար վերացնել ձևականությունն ու բյուրոկրատիզմն այդ աշխատանքում:

Ահա յերկու օրինակ, վորոնք ցայտուն կերպով ցույց են տալիս, թե ի՞նչ հետևանք է ունենում դասակարգային զգոնությունը կորցնելը և զորակոչին ձևական բյուրոկրատիկ վերաբերմունք ցուցաբերելը:

Ստալինի անվան ավտոգործարանի բջիջի քարտուղարը դրական բնութագիր եր տվել գործարանի շոֆեր Կորզեվին, գրելով թե նա կուսակցության անդամ է, կոմյերիտիության բջիջի քարտուղար, ծագում է միջակներից, հարվածյին է ու հասարակական աշխատող: Իսկ յերբ Կորզեվը ստուգման յենթարկվեց, պարզվեց, վոր նա սպիտակ գվարդիականի վորդի յե, վորը գնդակահարվել է Սորհրդային իշխանության դեմ ուղղված ապստամբությանը մասնակցելու համար (քաղաքացիական պատերազմի տարիներին) վոր Կորզեվի յեղբայրը, Անտոնովի բանդաներին մասնակից լինելու պատճառով (1921 թ.), նույնպես գնդակահարվել է: Այդ բոլորը թագցրել է Կորզեվը:

Տուլայի փամփուշտի գործարանի բանվոր Միխայիլ Դիմիտրովիչ Պիսկունովը նույնպես դրական բնութագիր եր ստացել յեռանկյու-



նուց: Յեռանկյունին գրել եր. «Մ. Դ. Պիսկունովը սոցիալական ծագումով գյուղացի յե: Գյուղից իր կապերը կտրել է 1930 թվականին, բանվոր է, անկուսակցական: Խորհրդային իշխանության ձեռնարկումներին դոհացուցիչ վերաբերմունք է ցուցաբերում: Արտադրությանը լավ է վերաբերվում: Անձնական ու լարոյական հատկությունները լավ են»:

Պարզվեց, վոր Պիսկունովը կուլակի վորդի յե: Ապակուլակացվել է: Նա ինքը և իր ընտանիքը, ապակուլակացումից հետո, փախել ու թաղնվել են: Պիսկունովը հասարակական-քաղաքական աշխատանքին չի մասնակցում: Խորհրդային իշխանության ձեռնարկումներին թշնամաբար է վերաբերվում: Անձնական ու բարոյական հատկությունները բացասական են:

Պետք է պայմաններ ստեղծել, վոր զորակոչին ողնող ամեն մի հանձնաժողով լինի իրոք մարտական, ակտիվ որգան, աշխատի սխտեմատիկաբար, վոր բնութագրերը կազմվեն վոչ թե շարուն ձևով, ընդհանուր գծերով, այլ կոնկրետ կերպով և ժամանակին, վորպեսզի դասակարգային ընտրության խնդիրների շուրջը, մասսայական աշխատանքի ամբողջ սխտեմի մեջնցով, լայնորեն մոբիլիզացիայի յենթարկվի ամբողջ խորհրդային հասարակայնության կարծիքը: Ով անուշադիր, անպատասխանատու վերաբերմունք է ցույց տալիս

զորակոչին, նա գիտակցաբար թե անգիտակցաբար ողնում է դասակարգային թշնամուն և նպաստում է նրա թափանցմանը կարմիր բանակի շարքերը, դրանով իսկ թուլացնելով նրա մարտունակությունը:

Մենք բացառիկ մեծ հնարավորություններ ունենք հիանալի լրացում տալու կարմիր բանակին: Այդ վկայում են հետևյալ թվերը:

Առաջին հաղթական հնգամյակից առաջ, զորակոչիկներին մեջ կար պիտանի ճանաչված 4,5 տոկոս կոմունիստ, 15 տոկոս կոմյերիտական, 24 տոկոս բանվոր, 3,2 տոկոս կոլտեստական: Իսկ անցյալ տարի բանակ լրացնող յերիտասարդության մեջ մենք ունեյինք 8 տոկոս կոմունիստ, 30 տոկոս կոմյերիտական, 40 տոկոս բանվոր և 38 տոկոս կոլտեստական: Այդ հնարավորություններն արդյունք են մեր սոցիալիստական յերկրի մեծագույն հաղթանակների:

### ՅԱԼ ԿԱՐԳԱՊԱՀ, ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՄԼՐՏԻԿՆԵՐ

Պատերազմը ներկա պայմաններում պահանջում է հսկայական քանակությամբ տարբեր նպատակ ու գործադրություն ունեցող բարդ մեքենաներ, վորոնց հետ պետք է լավ վարվել իրամանա կարմիր բանակի մարտիկը:

«Պատերազմը մեխանիկացվում է, մեքենայացվում է, ինդուստրացվում է, դրանով իսկ վերածվելով մարդ վոչնչաց-

ներու մի հսկայական, շատ բարդ գործարանի: Յեւ ահա այդ գործարանի համար, այդ մեխանիկացված պատերազմի համար, վորը մենք չենք ուզում, վորի դեմ մենք պայքարում ենք, վորը սակայն պատրաստում են մեր դեմ, — պահանջվելու յեն վորակյալ մեխանիկներ, տեխնիկներ, պահանջվելու յեն մարդիկ, վորոնք վոչ միայն գիտենան մեռնել, այլև ճիշտ վարվել այդ չափազանց ահեղ, և վոչ այնքան հաճելի ռազմական մեքենայի ամեն մի պտուտակի հետ»:

(ՎՈՐՈՇԻՆՈՎ):

Այն նոր տեխնիկան, վոր ունի այժմ մեր Կարմիր բանակը, աչքի առաջ ունենալով կարմիր բանակայինի ծառայության կարճ ժամանակամիջոցը բանվորադյուղացիական Կարմիր բանակի շարքերում, անտարակույս, շատ կբարդացներ վորակյալ մարտիկի մարտական կրթությունը, յեթե գոյություն չունենար յերիտասարգության նախնական նախագորակոչային պատրաստությունը:

Կարմիր բանակին պետք են՝ շոֆերներ, մոտոցիկլիստներ, տրակտորիստներ, ամեն տեսակ կապի աշխատողներ, սակրավոներ, յերկաթուղայիններ, անալպերներ և այլ պրոֆեսիաների մասնագետներ:

Մեր խնդիրն է՝ վոչ միայն ընտրել և ճիշտ


բաշխել ըստ զորքերի տեսակների այդ բոլոր մարդկանց, այլև կարողանալ զորակոչից առաջ պատրաստել անհրաժեշտ կադր՝ Կարմիր բանակի հարստուն պահանջները լրիվ բավարարելու համար:

Ուստի կուսակցան, կոմյերիտական, խորհրդային և արհմիութենական բոլոր կազմակերպությունները, Ավտոդորը և մանավանդ Հ. Պաշը-Ավիաքիմը, պետք է ավելի լայն ծավալեն և լրիվ ոգտագործեն միադամ ժամանակամիջոցը՝ ռազմական խմբակների միջոցով, մասնագետներ պատրաստելու ու վերապատրաստելու համար, ներգրավելով այդ խմբակներում զորակոչիկների լավագույն մասը:

Կարևորագույն նշանակություն ունի զորակոչիկների հրաձգային կրթությունը: Պետք է պայմաններ ստեղծել, վոր զորակոչիկների կազմում հնարավոր չափով շատ լինեն սնայպերներ, պարաչյուտիստներ, վորոշիլովյան հրաձիգներ: Կրժֆին վորոշիլովյան հրաձգի կրժֆանշան ունենալը պատվի գործ է ամեն մի գորակոչիկի համար:

Կարմիր բանակին պետք է տիրապետի առաջավոր այն տեխնիկային, վորով զինված է մեր Կարմիր բանակը, սակայն պարզ և վոր ժամանակակից տեխնիկային տիրապետել, այն ունի մնացորդ և մարտական բարդ մեքենային անկախ, վոր լրեն յենթարկ-

1-26896



վի, կարող ե միայն գրագետ, կուլտուրական կարմիր բանակայինը:

Ահա թե ինչո՞ւ զորակոչիկը դեռ զորակոչից շատ առաջ պետք է գրագիտություն ձեռք բերած լինի:

Յեթե անցյալ տարի գրագետ եր համարվում այն զորակոչիկը, վորը գիտեր կարգալ, գրել և թվաբանության չորս գործողությունները, ապա այս տարի այդ քիչ է: Չորակոչիկը պետք է վոչ միայն կարողանա լավ կարգալ ու գրել, այլև պետք է գիտենա տասնորդական բարդ կառուցակները և ըմբռնի յերկրաչափության ու հանրահաշվի տարրական հիմունքները:

Բացի ռազմական առաջավոր տեխնիկան յուրացնելուց, զորակոչիկի կուլտուրականությունը, ինչպես մատնանչել է Լենինը, հարկավոր է նաև այն պատճառով վոր՝

«Անգրագետը քաղաքականությունից դուրս է կանգնած, հասարակական քաղաքական կյանքից հեռու յե կանգնած: Նրան քաղաքականության ասպարեզները գրավելուց առաջ, հարկավոր է գրագիտություն սովորացնել»:

Չորակոչին ոժանդակող հանձնաժողովները պետք է նախաձեռնող հանդիսանան անգրագիտության վերացման գործում: Նրանք պետք է ամեն կերպ ոժանդակեն և ոգնեն ժողովրդական կրթության որդաններին և «Կորչի Անգրագիտությունը», ընկերությանը՝ անգրագիտու-

թյունը վերացնելու ասպարիզում նրանց կատարած աշխատանքում, ընտրելով նրանց ոգնելու համար ակտիվ կոմյեթիտականներ, մանկավարժներ, ուսանողներ ու կուլտրականայիններ: Կոլտոտեսային կուակագմակերպությունները և կոմյեթիտությունը պետք է ստանձնեն լիկկայանների շեֆությունը: Նրանք պետք է ոգնեն նրանց՝ դասագրքեր, գրքեր և այլ ձեռնարկներ ձեռք բերելու: Նրանք պետք է ոգնեն ուսումը կազմակերպելու:

Անցյալ տարվա զորակոչը ցույց տվեց, վոր մենք այդ ճակատամասում դեռ չենք կարողացել լրիվ կատարել առաջադրված պահանջները՝ մի շարք շրջաններ ու գյուղեր տվին անգրագետ ու կիսագրագետ մարտիկներ: Պետք է հաստատապես գիտենալ, վոր վոչ միայն ամեն մի անգրագետ, այլև նույնիսկ կիսագրագետ գորակոչիկ լիարժեք մարտիկ չէ: Նա հետ է մնում մարտական ու քաղաքական ուսման մեջ, թուլացնում է ամբողջ գրքամասերի մարտական կատարելագործման տեմպը: Ուստի ամեն մի զորակոչիկի խնդիրն է՝ լիովին վերացնել իր անգրագիտությունն ու կիսագրագիտությունը, բանակ գալ, լինելով լավ գրագետ: Ամեն մի անգրագետ գորակոչիկ մի արատավոր բիծ կլինի այն կազմակերպության համար, վորը տալիս է նրան Կարմիր բանակին:

Դրա համար անհրաժեշտ է՝

ա) այժմ իսկ ստուգել ամբողջ զորակոչային կոնտինգենտի գրագիտությունը:

բ) ստեղծել անգրագիտության ու կիսագրագիտության վերացման և գրագիտության բարձրացման խմբակներ:

գ) ապահովել կանոնավոր պարապմունքները և բոլորի ներկայությունը պարապմունքներին:

Կարմիր բանակի տեխնիկական բարձր զինվածությունը պահանջում է առանձնապես լավ կարգապահ մարտիկ: Լենինը, դեռ քաղաքացիական պատերազմի տարիներին, ասել էր՝ Ով ամբողջովին ու անձնվիրաբար չի աջակցում Կարմիր բանակին, ամբողջ ուժով չի պահպանում նրանում կարգն ու կարգապահությունը, նա դավաճան է»:

Հեղափոխական, գիտակից կարգապահությունը Կարմիր բանակի ամենաուժեղ կողմն է: Այդ կարգապահությունն ու գիտակցությունը, բազմապատկած տեխնիկայով, անպարտելի յեն դարձնում մեր Կարմիր բանակը: Յուրաքանչյուր զորակոչիկի խնդիրն է՝ արդեն զորակոչային կամպանիայի ընթացքում, իսկ հետագայում նաև Կարմիր բանակի շարքերում, ցույց տալ դասակարգային մեծագույն գիտակցություն, բարձր կարգապահություն արիություն, համարձակություն, Վճռականություն, համառություն, դիմացկունություն, հստակություն, լավ կազմակերպվածություն:

Անցյալ տարի զորակոչիկներին ամբողջ մասսան զորակոչային կետերն եր գալիս կազմակերպված ձևով, ջոկատներով, գլխավորված՝ գործարանների, կոլտնտեսությունների, գյուղխորհուրդների ներկայացուցիչների կողմից, ռապորտներով՝ սոցիալիստական շինարարության ճակատում ձեռք բերված նվաճումների մասին:

Տասնյակ հազարավոր հարվածային բրիգադներ, գործարաններում, խորհանտեսություններում ու կոլտնտեսություններում, պետությանը հանձնված հարյուր հազարավոր ցենտներ հացահատիկ, ցանված տասնյակ հազարավոր «պաշտպանության հեկտարներ», կազմակերպված ոգնություն բերքահավաքի կամպանիային, արտադրության ձեռքվածքների վերացման հարվածային տեմպ, ախտիվ մասնակցություն «պաշտպանության Փոնդի» կազմակերպմանը—ասա յերիտասարդ զորակոչիկների կոնկրետ գործերը:

Ահհրաժեշտ է ավելի կազմակերպված ու կարգապահ կերպով անցկացնել 1912 թվականին ծնվածների զորակոչը: Դրա համար անհրաժեշտ է՝

ա) ապահովել զորակոչիկների կազմակերպված, ժամանակին ու հարյուր տոկոսով ներկայանալը զորակոչային կետերը:

բ) ապահովել ամեն մի զորակոչիկի որինակելի վարքագիծը,

գ) զորակոչի պահին, հանձին ամեն մի

գորակոչիկի, ունենալ սոցիալիստական շինարարութեան այնպիսի հարվածային, վորը կարմիր բանակ գնա, առանց վորևէ պարտք ունենալու իր արտադրութեանը, իր կոլտնտեսութեանը:

Կուսակցական ու կոմյերիտական կազմակերպութեանները պետք է ստեղծեն այնպիսի դրութիւն, վոր գորակոչիկը կարմիր բանակի շարքերը գա, վորպէս հարվածային, զինված՝ արտադրութեան, խորհանտեսութեան ու կոլտնտեսութեան մեջ կատարած հարվածային աշխատանքի փորձով: Նրանք պետք է արտադրական, հասարակական, ախտիվ աշխատանքի ներգրավեն գորակոչիկին, ձգտելով, վոր գորակոչիկն իր ձեռնարկութեան, կոլտնտեսութեան, մեքենատրակտորային կայանի ու խորհանտեսութեան սոցիալիստական մրցութեան նախաձեռնողը դառնա:

Անհրաժեշտ է գորակոչիկներին կարմիր բանակ ցամաքելը դարձնել բոլոր աշխատավորների մասսայական մեծ տոնը, խորհրդային յերկրի մարտական պատրաստութեան մասսայական ցույց:

### ՀԱՆՈՒՆ ԱՌՈՂՁ ՖԻԶԻԿԱԿԵՍ ԱՄՐԱԿՈՒՌ ՀԱՄԱԼՐԾԱՆ

Կարմիր բանակին հարկավոր են առողջ, ամրակուռ և Ֆիզիկապես դիմացկուն մարտիկներ: Բանակում կարմիր բանակայինը կհանդիպի մի շարք դժվարութիւնների, վորոնք

անխուսափելի յեն ռազմական կյանքի պայմաններում՝ յերկարատեմ անցումներ, զինվորական ծանր հանդերձանք, կլիմայական տարբեր պայմաններ և այլն: Այդ բոլորը մարտիկից պահանջում է վորոչ դիմացկունութիւն և Ֆիզիկական կոփվածութիւն: Այդ պահանջներն զգալի չափով ավելանում են պատերազմի ժամանակ, յերբ մարտիկի Ֆիզիկական կայունութիւնը, դիմացկունութիւնը և պատերազմի ժամանակվա դժվարութիւնները տանելու ունակութիւնը կարող են յերբեմն վճռական նշանակութիւն ունենալ մարտական այս կամ այն գործողութիւնը կամ խնդիրը կատարելու համար:

Ահա թէ ինչու գորակոչիկը, դեռ բանակ դալուց առաջ, պետք է Ֆիզիկապես մարզված ու կոփված լինի: Ֆիզիկական նախնական մարզանքը գորակոչիկին կողնի ավելի լավ յուրացնելու ռազմական գործը, կդարձնի գորակոչիկին լիարժեք մի մարտիկ, վորն ընդունակ կլինի հաղթահարելու ռազմական կյանքի դժվարութիւնները, իսկ յերբեմն՝ նաև զրկանքները: Անցյալ տարվա գորակոչի ժամանակ կարմիր բանակում ծառայելու համար Ֆիզիկապես վոչ պիտանիների թիվը կազմում էր միայն 9 տոկոս: Բայց չէ՞ վոր ընդամենը դեռ 4-5 տարի առաջ Ֆիզիկապես վոչ պիտանիների թիվը կազմում էր 20 տոկոս, իսկ ցարական բանակում՝ մինչև 50 տոկոս:

Գորակոչին ոժանդակող հանձնաժողով-

ները պետք է իրենց վրա վերցնեն առողջարար Ֆիզիկուլտ աշխատանքի կազմակերպումը: Նրանք պարտավոր են ձգտել, վոր բժշական ստուգումն ու դիսպանսերացումն ընդգրկի բոլոր զորակոչիկներին գլխովին: Բժշկի յեզրակացությունը պետք է մտցվի զորակոչիկի հատուկ բժշկական քարտի մեջ: Զորակոչիկի համար պետք է պարտադիր լինի յեզրակացության իրագործումը: Պրոֆիկազմակերպությունները, միջոցներ ձեռք առնելով, վոր զորակոչիկները հարյուր տոկոսով ընդգրկվեն բժշկական քննությամբ՝ հիվանդ զորակոչիկներին պետք է ուղարկեն ամբուլատորիաները, դիսպանսերները, սանատորիումները, բուժավայրերը՝ նրանց բժշկելու համար: Թե արտադրության մեջ և թե ռազմական քաղաքական կրթության ասպարիզում բարձր ցուցանիչներ ցույց տված հարվածային զորակոչիկներին պետք է ուղարկել հանգստյան տները:

Տալ Կարմիր բանակին առողջ, Ֆիզիկապես ամրակուռ լրացում, դա ամենապատասխանատու խնդիրներից մեկն է հերթական զորակոչին պատրաստվելու ասպարիզում:

Իեպի Կարմիր բանակ «պատրա՛ստ աշխատանքի ու պաշտպանության» առաջին և յերկրորդ աստիճանի կրճ. քանչանով — այս է ամեն մի զորակոչիկի լողունը:

## ԲԱՅԱՌԻԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ

Բանվորագյուղացիական Կարմիր բանակի զորակոչի հետ միասին, կազբեր են հավաքագրվում ռազմական բոլոր դպրոցների համար: Ռազմական ու ռազմական-տեխնիկական դպրոցները տարեցտարի ընդունում են լավագույն յերիտասարդ պրոլետարներին ու կոլտնտեսականներին, պատրաստում են ռազմական գործի գիտությամբ ու մարքսիստական-լենինյան ստալինյան տեսությամբ զինված դաստիարակ-հրամանատարներ:

Բանվորագյուղացիական Կարմիր բանակի հրամանատարներին ներկայացվող պահանջներն այժմ զգալիորեն բարձր են: Ուստի ռազմական դպրոցների ընդունելությանը և նրա վորակին պետք է բացառիկ ուշադրություն նվիրել:

Ռազմական դպրոցներն են ընդունվում 18-ից մինչև լրիվ 22 տարեկան աշխատավորները: Այդ դպրոցներին պետք է տալ լավագույն հարվածային, առաջավոր բանվորներ ու ակտիվիստ-կոլտնտեսականներ, վորոնք ցույց են տվել աշխատանքային խանդավառության և դասակարգային գիտության որինակներ: Խորհրդային և բանվորական ամբողջ հասարակայնությունը պետք է խստիվ ստուգի ռազմական դպրոցները մտնել ցանկացողներին:

Ռազմական դպրոցներում սովորելու հա-

մար անհրաժեշտ է բարձր գրագիտութիւնն: Ուստի պարտադիր պայման է ունենալ յօթնամյակից վոչ պակաս ընդհանուր կրթութիւնն: Հրամանատարի Ֆիզիկական վիճակը կատարելապէս առողջ ու ամուր պետք է լինի, Ֆիզիկապէս վատառողջ, քրոնիկական մալարիա ունեցողները, թոքերի, սրտի ու նյարդի հիվանդութիւններ ունեցողները, թույլ տեսողութիւնն և լսողութիւնն ունեցողները ռազմական դպրոցները չեն ընդունւում:

Ռազմական դպրոցներում ուսման տեւողութիւնը տարբեր է, բայց վոչ պակաս, քան յերեք տարի: Ուսանողներն ու նրանց ընտանիքներն ռգտւում են այն բոլոր իրավունքներից ու արտոնութիւններից, զորոնք վերապահված են զինվորական ծառայողներին:

Ռազմական դպրոցների ընդունելութիւն մեջ բացառիկ պատասխանատու դեր է վերապահված կուսկազմակերպութիւններին և լեհինյան կոմյերիտմիութիւնը, վերը պետք է նախաձեռնողը հանդիսանա այդ գործում, ծաւալի բացատրական լայն կամպանիա, պետք է ռազմական դպրոցները ներգրավի կոմյերիտմիութիւնի լայնագույն, ակտիվ մասը:

### • ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՅՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՐՎԱ-ԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

Կարմիր բանակի զորակոչի նախապատրաստումը և ինքը՝ զորակոչը, պետք է կատարվի սոցիալիստական լայն մրցութիւնն ու հարվա-

ծայնութիւնն նշանաբանով: Մրցութիւնը պետք է տեղի ունենա թե զորակոչիկների միջև՝ լրբիվ ու ժամանակին ներկայանալու համար, զորակոչի խնդիրներն ու պայմաններն ամենից լավ գիտենալու համար ու դրանք լավագույն կերպով կատարելու համար, և թե շրջանների գործարանների, կոլտնտեսութիւնների, խորհանտեսութիւնների, արհմիութիւնների, գյուղերի միջև, կոմյերիտմիութիւնն ու կուսակցութիւնն բջիջների և այլ հասարակական կազմակերպութիւնների միջև: Մրցութիւնն հիմնական որյեկտները բղխում են զորակոչի խնդիրներից՝ դասակարգային լավագույն ընտրութիւնն, անգրագիտութիւնն ու կիսագրագիտութիւնն լիակատար վերացում, զորակոչիկների Ֆիզիկական լավագույն վիճակ, նրանց լրբիվ ու ժամանակին ներկայանալը զորակոչային կետը, զորակոչիկների ժամանակին ու լիակատար կուլտուրական-քաղաքական սպասարկում:

Կարմիր բանակ մտնելով, ամեն մի զորակոչիկ պետք է հաստատապէս հիշի Վ.Ի. Լենինի հետեյալ խոսքերը՝

«Լա՛վ սովորիր ռազմական գործը: Այդ գիտութիւնը պրոլետարներին անհրաժեշտ է վոչ թե նրա համար, վոր կրակեն իրենց յեղբայրների՝ մյուս

յերկրներ ընդհանրապես վրա, այլ նրա համար, վոր վերջ տրվի շահագործմանը, աղքատութեանը և պատերազմներին»:

ՀԱՄԿ(Բ)Կ. ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՈՒ ԼԵՆԻՆԻՉՄԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԲԱԺԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՄԿԿ(Բ) 17-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏՎԱԾ՝ ԸՆԿ.

ՍՍԱԼԻՆԻ ՀՄՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԻՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՍՐՎԵԼԸ  
ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Յերկարաձգվող տնտեսական ճգնաժամի արդյունք հանդիսացավ կապիտալիստական յերկրների քաղաքական դրուժյան մինչ այժմ չտեսնված սրվելն ինչպես այդ յերկրների ներսում, այնպես ել նրանց միջև:

Արտաքին շուկաների համար մղվող պայքարի ուժեղացումը, ազատ առևտրի վերջին մնացորդների վաճառումը, արգելիչ մաքսերը, առեվտրական պատերազմը, վալյուտաների պատերազմը, դեմպինգը և շատ ուրիշ համանման միջոցառումները, վորոնք ցուցադրում են ծայրահեղ նացիոնալիզմը տնտեսական քաղաքականութեան մեջ, ծայր աստիճան սրեցին հարաբերութեանները յերկրների միջև, ուղղակի ընդհարումների համար հող ստեղծեցին և հերթի դրին պատերազմը, վորպես աշխարհը և աղղեցութեան շրջաններն ավելի ուժեղ պետութեանների ոգտին նոր վերաբաժանման յենթարկելու միջոց:

Ճապոնիայի պատերազմը Չինաստանի դեմ, Մանջուրիայի սկուպացիան, Ճապոնիայի



դուրս գալն Ազգերի Լիգայից և առաջխաղալը դեպի հյուսիսային Չինաստան— ե՛լ ավելի սրեցին դրուժյունը: Մեծ Ովկիանոսի համար մղվող պայքարի ուժեղանալը և ռազմա-ծո-վային սպառազինումների աճումը ձապոնիա-յում, ՀԱՄՆ-ում, Մենգլիայում, Ֆրանսիա-յում արդյունքն են այդ սրման:

Գերմանիայի դուրս գալն Ազգերի Լիգա-յից և ռևանչի ուրվականը նոր մղում տվին դրուժյան սրմանն ու սպառազինությունների աճմանը Յեվրոպայում:

Զարմանալի չե, վոր բուրժուական պացի-ֆիզմն այժմ քաշ ե տալիս իր վողորմելի գո-յությունը, իսկ զինաթափման վերաբերյալ դատարկախոսությանը փոխարինում են «գործ նական» խոսակցությունները՝ սպառազինու-թյան ու լրացուցիչ զինման մասին:

Դարձյալ, ինչպես և 1914 թվին, առաջին պլան են մղվում ռազմատենչ իմպերիալիզմի կուսակցությունները, պատերազմի և ռևանչի կուսակցությունները:

Գործն ակնհայտ կերպով գնում ե դեպի նոր պատերազմ:

Ե՛լ ավելի յե սրվում՝ նույն այդ Փակտոր-ների ներգործության շնորհիվ՝ կապիտալիս-տական յերկրների ներքին դրուժյունը: Ար-դյունաբերական ճգնաժամի չորս տարիները հյուժեցին ու հուսահատության հասցրին բան-վոր դասակարգին: Գյուղատնտեսական ճգնա-ժամի չորս տարիները վերջնականապես քայ-

քայեցին գյուղացիության չունևոր խավերին վոչ միայն հիմնական կապիտալիստական յեր-կրներում, այլև, մանավանդ, կախյալ և գաղութային յերկրներում: Փաստ ե, վոր չնայած ամեն տեսակ վիճակագրական խորա-մանկություններին, վորոնք նպատակ ունեն պակաս ցույց տալ գործազուրկների թիվը, գործազուրկների քանակն ըստ բուրժուական հիմնարկների պաշտոնական տվյալների՝ Անգ-լիայում հասնում ե 3 միլիոնի, Գերմա-նիայում՝ 5 միլիոնի, ՀԱ Միացյալ Նա-հանգներում՝ 10 միլիոնի, ել չենք խո-սում Յեվրոպայի մյուս յերկրների մասին: Դրան ավելացրեք մասնակի գործազուրկնե-րին, վորոնց քանակն անցնում ե տասնյակ մի-լիոնից, ավելացրեք քայքայված գյուղացի-ների միլիոնավոր մասսաներին, և դուք կըս-տանաք աշխատավոր մասսաների կարիքի ու հուսահատության մոտավոր պատկերը: Ժո-ղովրդական մասսաները դեռևս այն տեղը չեն հասել, վորպեսզի կապիտալիզմի դեմ գրոհի գնան, բայց վոր գրոհի գաղափարը հասունա-նում ե մասսաների գիտակցության մեջ, սրանում հազիվ թե կարող ե կասկած լինել: Սրա մասին պերճախոս կերպով խոսում են թեկուզ հենց այնպիսի փաստեր, ինչպես ե սպանական հեղափոխությունը, վորը տա-պալեց Փաշիզմի ռեժիմը և խորհրդային չըր-ջանների աճումը Չինաստանում, վորի դադա-րեցումը չինական և ոտարերկրյա բուրժուա-

զիսյի միացյալ հեղափոխութեան ուժերից վեր ե:

Հենց սրանով ել բաացտրվում ե այն փաստը, վոր կապիտալիստական յերկրներէ տիրապետող դասակարգերը Չանասիրաբար վոչընչացնում են կամ վոչնչի յեն հավասարեցնում պարլամենտարիզմի և բուրժուական դեմոկրատիայի վերջին մնացորդները, վորոնք բանվոր դասակարգը կարող ե ոգտագործել ճնշողների դեմ մղած իր պայքարում, ընդհատակ են քշում, կոմունիստական կուսակցութիւններին և անցնում են իրենց դիկտատուրան պահպանելու բացահայտ տերորիստական մեթոդներէ:

Շովինիզմն ու պատերազմի նախապատրաստումը վորպես արտաքին քաղաքականութեան հիմնական տարրեր, բանվոր դասակարգի սանձահարումը և տերրորը ներքին քաղաքականութեան ասպարիզում, վորպես ապագա ռազմաճակատների թիկունքի ամրացման անհրաժեշտ միջոց, — ահա թե ի՞նչն ե առանձնապես զբաղեցնում հիմա ժամանակակից իմպերիալիստական քաղաքագետներին:

Զարմանալի չե, վոր Փաշիզմը հիմա ամենից ավելի մոռայի ապրանք ե դարձել ռազմատե՛նչ բուրժուական քաղաքագետների շրջանում: Յես խոսում եմ վոչ միայն Փաշիզմի մասին ընդհանրապես, այլև ամենից առաջ գերմանական տիպի Փաշիզմի մասին, վորը սխալ կերպով ե անվանվում նացիոնալ-սոցիալիզմ,

վորովհետեւ յեթե ամենամանրազնին կերպով իսկ դիտելու լինենք, անհնար ե հայտաբերել նրա մեջ սոցիալիզմի նույնիսկ մի ամիտ:

Այս կապակցութեամբ Փաշիզմի հաղթութիւնը Գերմանիայում հարկավոր ե դիտել վոչ միայն վորպես բանվոր դասակարգի թուլութեան նշան և բանվոր դասակարգի նրկատամբ սոցիալ-դեմոկրատիայի գործած դավաճանութիւնների արդիւնք, — սոցիալ-դեմոկրատիայի, վորը ճանապարհ հարթեց Փաշիզմի համար: Այդ հաղթութիւնը հարկավոր ե դիտել նաև վորպես բուրժուազիսյի թուլութեան նշան, վորպես նշան այն բանի, վոր բուրժուազիան արդեն անկարող ե իշխել պարլամենտարիզմի և բուրժուական դեմոկրատիայի հին մեթոդներով, վորի համար նա ստիպված ե ներքին քաղաքականութեան մեջ դիմել կառավարման տերորիստական մեթոդներէ, — վորպես նշան այն բանի, վոր խաղաղատենչ արտաքին քաղաքականութեան հիման վրա նա այլևս անկարող ե յեւք գտնել ներկա դրութիւնից, վորի համար նա ստիպված ե դիմել պատերազմի քաղաքականութեան:

Այսպես ե դրութիւնը:

Ինչպես տեսնում եք, գործը գնում ե դեպի նոր իմպերիալիստական պատերազմ, վորպես յեւք ներկա դրութիւնից:

Իհարկե, հիմք չկա յենթադրելու, վոր պատերազմը կարող ե իսկական յեւք տալ:

Ընդհակառակը, այն պետք է ելլի ավելի խճճի դրուժյունը: Ավելին՝ այն անշուշտ կարճակի հեղափոխության ձեռքերը և հարցականի տակ կընի կապիտալիզմի գոյությունն իսկ մի շարք յերկրներում, ինչպես այդ տեղի ունեցավ առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում: Յեվ յեթե, չնայած առաջին իմպերիալիստական պատերազմի փորձին, բուրժուական քաղաքագետներն այնուամենայնիվ պատերազմից են բռնում, ինչպես խեղդվողը՝ ծղոտից, ապա այդ նշանակում է, վոր նրանք վերջնականապես խճճվել են, փակուղի յեն ընկել և պատրաստ են գլխակորույս անդունդ նետվելու»:

**ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՍՀՄ-Ի ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

Հեշտ է հասկանալ ԽՍՀՄ-ի համար վորքան դժվար եր կիրառել իր խաղաղատենչ քաղաքականությունը ռազմական կոմբինացիաների ժահահոտությամբ թունավորված մըթնոլոտրում:

Պատերազմին նախորդող այս մոլեգնապարի պայմաններում, վորն ընդգրկել է մի ամբողջ շարք յերկրներ, ԽՍՀՄ-ն այս տարիներ ընթացքում շարունակում եր ամոգր և անհողողդ կանգնած մնալ խաղաղության իր դիրքերում, պայքարելով պատերազմի սպառնալիքի դեմ, պայքարելով խաղաղության

պահպանման համար, ընդառաջ գնալով այն յերկրներին, վորոնք այս կամ այն կերպ խաղաղության պահպանման կողմն են, ճերկացնելով և դիմակազերծ անելով նրանց, ովքեր պատերազմ են նախապատրաստում, պատերազմի պրովոկացիա յեն անում:

ԽՍՀՄ-ն ինչի՞ վրա յեր հույս դնում խաղաղության համար մղած այդ դժվարին և բարդ պայքարում:

ա) Իր աճող տնտեսական և քաղաքական գորության վրա:

բ) Բոլոր յերկրների՝ խաղաղության պահպանմամբ կենսականորեն շահագրգռված բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների բարոյական աջակցության վրա:

գ) Այն յերկրների վոխջախոհության վրա, վորոնք այս կամ այն պատճառով շահագրգռված չեն խաղաղության խախտմամբ, և վորոնք ցանկանում են զարգացնել առևտրական հարաբերություններն այնպիսի ճշտահատար կոնտրազենտի հետ, ինչպես ԽՍՀ Միությունն է:

դ) Վերջապես—մեր փառապանծ բանակի վրա, վորը պատրաստ է պաշտպանելու յերկրը դրսի հարձակումներից:

Այս բազայի վրա ծագեց մեր կամպանիան հանուն չհարձակման պակտի և հարձակվող կողմի բնորոշման պակտի կնքման՝ հարևան պետությունների հետ: Դուք գիտեք, վոր այդ կամպանիան հաջողություն ունեցավ: Ինչպես

հայտնի յե, չհարձակվելու պակտ կնքված է վոչ միայն Արևմուտքում և Հարավում մեզ հարևան պետությունների մեծամասնության հետ, այդ թվում Ֆինլանդիայի ու Լեհաստանի հետ, այլև այնպիսի յերկրների հետ, ինչպես են Ֆրանսիան, Իտալիան, իսկ հարձակվող կողմը բնորոշող պակտը՝ նույն այդ հարևան պետությունների հետ, ներառյալ և Փոքրը Անտանտը:

Նույն այդ բազայի վրա ամրացավ բարեկամությունը ԽՍՀՄ-ի և Թյուրքիայի միջև, լավացան ու անվիճելիորեն բավարար դարձան հարաբերությունները ԽՍՀՄ-ի և Իտալիայի միջև, լավացան հարաբերությունները Ֆրանսիայի, Լեհաստանի և Մերձբալթյան մյուս պետությունների հետ, վերականգնված են հարաբերությունները ՀԱՄՆ-ի, Չինաստանի հետ և այլն:

ԽՍՀՄ-ի խաղաղատենչ քաղաքականության հաջողություններն արտացոլող փաստերի շարքից հարկավոր է վեր հանել և զատել յերկու փաստ, վորոնք ունեն անվիճելիորեն լուրջ նշանակություն:

1) Յես նկատի ունեմ նախ այն բեկումը դեպի լավը ԽՍՀՄ-ի և Լեհաստանի, ԽՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև յեղած հարաբերությունների մեջ, վորը տեղի ունեցավ վերջին ժամանակներս: Անցյալում, ինչպես հայտնի յե, մեր հարաբերությունները Լեհաստանի հետ լավ չէին: Լեհաստանում սպանում էին մեր պետու-

թյան ներկայացուցիչներին: Լեհաստանն իրեն համարում էր արևմտյան պետությունների բարյերը ԽՍՀՄ-ի դեմ: Լեհաստանի վրա հույս ելին ղնում բոլոր և ամեն տեսակի իմպերիալիստները՝ վորպես առաջավոր ջոկատի՝ ԽՍՀՄ-ի վրա ռազմական հարձակում գործելու դեպքում: Ավելի լավ դրության մեջ չէր ԽՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև յեղած հարաբերությունների գործը: Բավական է վերհիշենք Ռամզինի վնասարարական խմբակի՝ Մոսկվայում տեղի ունեցած դատավարության պատմությունից առնված փաստերը, վորպեսզի վերականգնենք մեր հիշողության մեջ ԽՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև յեղած փոխհարաբերությունների պատկերը: Յեվ ահա այդ անցանկալի հարաբերություններն սկսում են աստիճանաբար անհետանալ: Նրանց փոխարինում են ուրիշ հարաբերություններ, վորոնց չի կարելի անվանել այլ կերպ, բայց յեթե մերձեցման հարաբերություններ: Բանը միայն այն չէ, վոր մենք այդ յերկրների հետ ստորագրել ենք չհարձակվելու պակտ, թեպետև պակտն ինքնին ունի լրջազույն նշանակություն: Բանը նախ և առաջ այն է, վոր փոխադարձ անվստահությամբ վարակված մթնոլորտն սկսում է ցրվել: Այդ, իհարկե, չի նշանակում, թե մերձեցման ուրվագծվող պրոցեսը կարելի յե դիտել վորպես բավականաչափ ամուր, գործի վերջնական հաջողությունն ապահովող պրոցես: Քաղաքականության

անակնկալներն ու զիզզադներն, որինակ՝ Լեհաստանում, վորտեղ հակախորհրդային տրամադրությունները դեռ ուժեղ են, տակալին չի կարելի այնքան ել բացառված համարել: Բայց մեր հարաբերությունների մեջ առաջացած բեկումը դեպի լավը՝ անկախ նրա ապագա արդյունքներից, — մի փաստ է, վորն արժանի չէ նշվելու և առաջ քաշվելու վորպես խաղաղության գործի բարելավման Փակտոր:

Վո՞րն է այդ բեկման պատճառը, ի՞նչն է խթանում նրան:

Նախ և առաջ ԽՍՀՄ-ի ուժի և գորուծյան աճումը: Մեր ժամանակ թույլերի հետ ընդունված չէ հաշվի նստելու, — հաշվի չեն նստում միայն ուժեղների հետ: Իսկ այնուհետև — Գերմանիայի քաղաքականության մեջ տեղի ունեցած մի քանի փոփոխությունները, վորոնք արտացոլում են ունանչիստական և իմպերիալիստական տրամադրությունների աճումը Գերմանիայում:

Մի քանի գերմանական քաղաքագետներ այս առթիվ ասում են, թե ԽՍՀՄ-ն կողմնորոշվում է դեպի Ֆրանսիան և Լեհաստանը, թե Վերսալի պայմանագրի հակառակորդ լինելուց ԽՍՀ Միությունը դարձել է նրա կողմնակիցը, թե այդ փոփոխությունը բացատրվում է նրանով, վոր Գերմանիայում Փաշիս-

տական ուժիմ է հաստատվել: Այդ ճիշտ չէ: Իհարկե, մենք հեռու չենք այն բանից, վոր հրճվենք Գերմանիայի Փաշիստական ուժիմով: Բայց այստեղ բանը Փաշիզմը չէ, թեկուզ հենց այն պատճառով, վոր Փաշիզմը, որինակ, Իտալիայում չխանդարեց ԽՍՀՄ-ին լավագույն հարաբերություններ հաստատելու այդ յերկրի հետ: Բանը նաև յերևակայական փոփոխությունները չեն մեր վերաբերմունքի մեջ դեպի Վերսալի պայմանագիրը: Մենք, վոր ճաշակել ենք Բրեստի հաշտության խայտառակությունը, մենք չենք, վոր պետք է գովերգենք Վերսալի պայմանագիրը: Մենք համաձայն չենք միայն այն բանին, վոր այդ պայմանագրի պատճառով աշխարհը նետվի նոր պատերազմի հորձանուտը: Նույնը պետք է ասել ԽՍՀ Միության յերևակայական վերակողմնորոշման մասին: Մենք չենք ունեցել կողմնորոշում դեպի Գերմանիան, ճիշտ այնպես, ինչպես վոր չունենք կողմնորոշում դեպի Լեհաստանն ու Ֆրանսիան: Մենք կողմնորոշվում եյինք անցյալում և կողմնորոշվում ենք ներկայումս դեպի ԽՍՀՄ-ն և միմիայն ԽՍՀՄ-ն (փոքորկալի ծափեր): Յեվ յեթե ԽՍՀՄ-ի շահերը պահանջում են մերձեցում խաղաղության խախտմամբ չչահագրգռված այս կամ այն յերկրների հետ, մենք զնում ենք դեպի այդ գործն առանց տատանումների:

Վո՞չ, բանն այդ չէ: Բանը Գերմանիայի քաղաքականության փոխվելն է: Բանն այն է,

վոր դեռևս ներկայիս գերմանական քաղաքա-  
գեաների իշխանության գլուխ Աանցնելու նա-  
խորդող շրջանում և մանավանդ նրանց իշխա-  
նության գլուխ անցնելուց հետո, Գերմա-  
նիայում պայքար սկսվեց յերկու քաղաքական  
գծերի միջև: Հին քաղաքականության, վոր  
իր արտացոլումն եր գտել Գերմանիայի հեռ  
ԽՍՀՄ-ի կնքած հայտնի պայմանագրերի մեջ,  
և «նոր» քաղաքականության միջև, վորը հիմ-  
նականում հիշեցնում և քաղաքականությու-  
նը նախկին գերմանական կայզերի, վորը մի  
ժամանակ ոչուպացիայի յենթարկեց Ուկրա-  
նան և արշավանք ձեռնարկեց Լենինգրադի  
դեմ, Մերձբալթյան յերկրները վերածելով  
այդպիսի արշավանքի պլացդարմի, ընդ վո-  
րում «նոր» քաղաքականությունը բացցահայտ  
կերպով հաղթանակում և հնին: Պատահակա-  
նություն չի կարելի համարել, վոր «նոր» քա-  
ղաքականության մարդիկ ամեն ինչում գե-  
րակշռություն են ձեռք բերում, իսկ հին քա-  
ղաքականության կողմնակիցները կորցրին ի-  
րենց դիրքը: Պատահական չէ նաև Հուգեն-  
բերգի հայտնի յելույթը Լոնդոնում, ճիշտ  
այնպես, ինչպես վոր պատահական չեն Գեր-  
մանիայի կառավարող կուսակցության ար-  
տաքին քաղաքականության ղեկավար Ռոզեն-  
բերգի վոչ-պակաս հայտնի գեկլարացիանե-  
րը: Ահա թե բանն ինչումն է, ընկերնե՛ր:

2) Յերկրորդ՝ յես նկատի ունեմ նորմալ  
հարաբերությունների վերականգնումը ԽՍՀՄ

և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-  
հանգների միջև: Կասկած չի կարող լինել,  
վոր այս ահտն ունի լրջագույն նշանակու-  
թյուն միջազգային հարաբերությունների  
ամբողջ սխտեմի մեջ: Բանը միայն այն չէ,  
վոր այն բարձրացնում և խաղաղության պահ-  
պանման գործի շանսերը, բարելավում և  
հարաբերությունները յերկու յերկրների մի-  
ջև, ամբացնում և առևտրական կապերը  
նրանց միջև ու ստեղծում և փոխադարձ համա-  
գործակցության բազա: Բանն այն է, վոր  
այն ուղենիչ և դնում հնի և նորի միջև— հնի՝  
յերբ ՀԱՄ Նահանգները զանազան յերկրե-  
րում համարվում և յին ամեն տեսակ հակա-  
խորհրդային տենդենցների պատվար և նորի՝  
յերբ այդ պատվարը կամովին վերցված և  
ճանապարհից՝ հողուտ յերկու յերկրների փո-  
խադարձ շահերի:

Սրանք են խաղաղության խորհրդային  
քաղաքականության հաջողություններն ար-  
տացոլող յերկու հիմնական փաստերը:

Սակայն սխալ կիրներ կարծել, թե հաջվե-  
տու ժամանակաշրջանում մեզ մոտ ամեն ինչ  
հարթ և ընթացել: Վո՛չ, չի կարելի ասել, թե  
ամեն ինչ հարթ և ընթացել մեզ մոտ:

Վերհիշեցեք թեկուզ հենց այն ճնշումը,  
վոր գործադրվում եր Անգլիայի կողմից—մեր  
եքսպորտի վրա դրած եմարգոն, մեր ներքին  
գործերին միջամտելու և դրանով մեզ շոշափե-  
լու՝ մեր դիմադրության ուժը չափելու փոր-

ծը: Ճիշտ է, այդ փորձից վոչինչ դուրս չեկավ,  
և եմդարգոն հետո վերացվեց, բայց այդ վո-  
տընձգությունների անախորժ մրուրը դեռևս  
զգալ է տալիս իրեն այն ամենի մեջ, ինչ վերա-  
բերում է Անգլիայի և ԽՍՀՄ-ի հարաբերու-  
թյուններին, այդ թվում՝ առևտրական պայ-  
մանագրի վերաբերյալ բանակցությունների  
մեջ: Իսկ այդ վոտնձգությունները ԽՍՀՄ-ի  
**դեմ պատահականությունն չի կարելի համարել:**  
Հայտնի չէ, վոր անգլիական պահպանողակա-  
ների մի մասը չի կարող ապրել առանց այդպի-  
սի վոտնձգությունների: Յեվ հենց այն պատ-  
ճառով, վոր դրանք պատահական չեն, մենք  
պետք է հաշվի առնենք, վոր առաջիկայում էլ  
հարձակումներ կգործեն ԽՍՀՄ-ի վրա, կըս-  
տեղծեն ամեն տեսակ սպառնալիք, նրան վնաս  
կհասցնեն և այլն:

Չի կարելի նկատի չունենալ նաև ԽՍՀՄ-ի  
և Ճապոնիայի միջև յեղած հարաբերություն-  
ները, վորոնք կարոտ են լուրջ լավացման:  
Ճապոնիայի հրաժարվելը չհարձակվելու  
պակտ ստորագրելուց, վորի կարիքը Ճապո-  
նիան պակաս չի զգում, քան ԽՍՀՄ-ն, ավելորդ  
անգամ ընդդժում է, վոր մեր հարաբերու-  
թյունների բնագավառում ամեն ինչ չէ, վոր  
բարեբաստիկ վիճակում է: Նույն այդ բանը  
հարկավոր է ասել Չին-Արևելյան յերկաթու-  
ղու վերաբերյալ բանակցությունների ընդ-  
հատման նկատմամբ, վորը տեղի չէ ունեցել  
վոչ ԽՍՀՄ-ի մեղքով, ինչպես նաև այն մա-

սին, վոր ճապոնական գործակալներն անթույ-  
լատելի բաներ են անում Չին-Արևելյան յեր-  
կաթուղու վրա, ապորինի ձերբակալում են  
Չին-Արևելյան յերկաթուղու խորհրդային  
ծառայողներին և այլն: Յես էլ չեմ խոսում  
այն մասին, վոր զինվորական մարդկանց մի  
մասը Ճապոնիայում բացահայտրեն քարո-  
զում է մամուլում ԽՍՀՄ-ի դեմ պատերազ-  
մելու և Պրիմորյեն զավթելու անհրաժեշտու-  
թյունը՝ զինվորականների մյուս մասի ակն-  
հայտ հավանությունը վայելելով, իսկ Ճապո-  
նիայի կառավարությունը փոխանակ պատե-  
րազմի հրձիգներին կարգի հրավիրելու, ձեաց-  
նում է, թե այդ իրեն չի վերաբերում: Դժվար  
չէ հասկանալ, վոր նման հանգամանքները չեն  
կարող անհանգստության և անվստահության  
մթնոլորտ չստեղծել: Իհարկե, մենք առաջի-  
կայում ևս շարունակելու յենք հաստատակա-  
մորեն կիրառել խաղաղության քաղաքակա-  
նություն և ջանալ հասնելու Ճապոնիայի հետ  
մեր հարաբերությունները լավացնելուն, վո-  
րովհետև մենք այդ հարաբերությունների լա-  
վացում ենք ցանկանում: Բայց այստեղ ամեն  
ինչ չէ, վոր մեզանից է կախված: Այդ պատճա-  
ռով՝ դրա հետ մեկտեղ մենք պետք է ձեռք առ-  
նենք բոլոր միջոցները, վորպեսզի ապահովենք  
մեր յերկիրն անախնակներից և պատրաստ լի-  
նենք պաշտպանելու նրան հարձակումից (փո-  
քորկալի ծափեր):

Ինչպես տեսնում եք, մեր խաղաղատենչ

քաղաքականութեան հաջողութեաններէ կող-  
քին մենք ունենք նաև մի շարք բացասական  
յերևույթներ:

Այս և իՍՀՄ-ի արտաքին դրութեանը:

Մեր արտաքին քաղաքականութեանը  
պարզ է: Խաղաղութեանը պահպանելու  
և առևտրական հարաբերութեանները բոլոր  
յերկրների հետ ուժեղացնելու քաղաքականու-  
թեան է այն: ԻՍՀՄ-ն չի մտածում սպառնալ  
վորակ մեկին և, առավել ևս, հարձակվել  
վորակ մեկի վրա: Մենք խաղաղութեան կողմն  
ենք ու պաշտպանում ենք խաղաղութեան գոր-  
ծը: Բայց մենք չենք վախենում սպառնալիք-  
ներից և պատրաստ ենք հարվածով պատաս-  
խանել պատերազմի հրձիգների հար-  
վածին (փոքորկալի ծափեր): Ով խա-  
ղաղութեան է ցանկանում և ձգտում  
է գործարար կապեր հաստատել մեզ  
հետ, նա մեզ մոտ միշտ աջակցութեան կզըտ-  
նի: Իսկ նրանք, ովքեր փորձ կանեն հարձակ-  
վել մեր յերկրի վրա, — կստանան կործանիչ  
հակահարված, վորպէսզի այսուհետև նրանց  
համար հրապուրիչ չլինի իրենց խողի դուռնը  
կոխել մեր խորհրդային բանջարանոցը (ծա-  
փերի վորոտ):

Այս և մեր արտաքին քաղաքականութեանը  
(ծափերի վորոտ):

Խնդիրն այն է, վոր այսուհետև ել կյան-  
քում կիրառենք այդ քաղաքականութեանն  
ամենայն հաստատակամութեամբ ու հետևո-  
ղականութեամբ»:

## ԲԳԿԲ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՈՒ- ԹՅՈՒՆԸ

ՀԱՄԿ(Բ) 17-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ  
ԸՆԿ. ՎՈՐՈՇԻԼՈՎԻ ՃԱՌԻՑ

ԱՅԺՄ ԲԱՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱ-  
ՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵՆՔ  
ԼՈՒԾԵԼ ԵՆՔ

1930 թվականին, մինչև 16-րդ համազու-  
մարը մենք շատ քիչ տանկ ունեյինք: Այդ  
տանկերի մի մասը շինել էյինք արդեն մենք,  
մի մասը մնացել էր մեր պատերազմական ա-  
վարի «վաստակներից» (ծիծաղի բռնկում):

ԱՅԺՄ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԱՆԿԵՐ, ԲԱՎԱԿԱՆ ԹՎՈՎ:

1930 թվականին մենք ունեյինք իմպերիա-  
լիստական պատերազմից, ցարից մնացած,  
մասամբ ել անցյալ տարիներին մեր կառու-  
ցած հրետանի: Դա վատ հրետանի չէր, բայց  
հետ էր մնում ոտարերկրյա ժամանակակից  
հրետանուց: Մենք շատ փոքր թվով ունեյինք  
ծանր հորիցային և փոքր կալիբրի տանկային  
և հակատանկային հրետանի: Վերջին տարի-  
ներս կազմակերպվեց մի շարք նոր տիպարի  
հրանոթների և արկերի արտադրութեանն  
ու մեծ աշխատանք կատարվեց գոյութեան ու-



նեցող սիստեմները ժամանակակից դարձնելու համար:

**ԱՅԺՄ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՔԱՆԱԿԱՊԵՍ ՈՒ ՎՈՐԱԿԱՊԵՍ... ՊՏԱՇԱՃ ՀՐԵՏԱՆԻ:**

1930 թվականին բանակն արդեն զգալի չափով զինված էր ձեռքի ու հաստոցավոր զնդացրերով: Սակայն մեզ մոտ չկար մեր սեփական նոր սիստեմների մասսայական կանոնավոր արտադրութիւն, բոլորովին չկար հաստոցավոր և ավիացիոն զնդացրերի սեփական արտադրութիւն, չկային զենթիթային կրակի համար գուգային և այլ զնդացրեր:

**ԱՅԺՄ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՄԵՁ ԼԻՈՎԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՔԻ, ՀԱՍՏՈՑԱՎՈՐ, ՏԱՆԿԱՅԻՆ, ԱՎԻԱՅԻՈՆ ՅԵՎ ՁԵՆԻԹԱՅԻՆ ԼԱՎ ԳՆԴԱՑՐԵՐ:**

1930 թվականին մենք դեռ շատ աղքատ էինք քիմիական պաշտպանութեան միջոցներից: Մեր քիմիական արդյունաբերութիւնը կազմում է չորս վոտքով: Այժմ մենք ունենք քիմիական հզոր արդյունաբերութիւն.

բայց... (դառնալով ընկ. Որշոնիկիձէյին), ընկ. Սերգո, վոչ բավականաչափ զորեղ, վորպեսզի հնարավոր լինի լրիվ բավարարել նրանով թե ժողովրդական տնտեսութեան կարիքները և թե յերկրի պաշտպանութիւնը: **ԱՅՆՈՒ ՀԱՆԴԵՐՁ, ԱՅԺՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵՐ ՀԱՅՏՆԵՐԸ ՎԱՏ ՁԵՆ ԲԱՎԱՐԱՐՎՈՒՄ:**

1930 թվականին մենք շատ վատ էինք

ապահովված ժամանակակից կապի միջոցներով: Ռազիոմիջոցներ չհամարյա բոլորովին չունեինք: Այժմ մենք ունենք կապի վոչ վատ միջոցներ՝ լարային, ռազիո և այլն, սակայն դեռ բոլորովին ապահովված չենք համարում մեզ: Ընկ. Սերգոն այդ դիտե և պարտավոր է ամենակարճ ժամանակամիջոցում տալ մեզ այն ամենը, ինչ վոր պակասում է:

Մեծ հաջողութիւններ ենք ձեռք բերել նաև ճարտարագիտական գործերի տեխնիկական հագեցման տեսակետից:

**ՄԵՐ ՈՒԱԶՄ ՈՂԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՄԱՍԻՆ** ինչպես գիտենք, մենք վատ ավիացիա չունեինք արդեն 1930 թվականին: Ձեռքի այդ կարևորագույն նոր տեսակին մենք ինչպես հարկն է ձեռնամուխ ենք յեղել մի քանի տարի ավելի առաջ, քան կարողացել ենք պայքար սկսել ռազմական տեխնիկայի մյուս բոլոր ամբողջներին նույնպես տիրապետելու համար:

Այն, ինչ վոր ունեինք մենք ողային ուժերի ասպարիզում 3—4 տարի առաջ, չեր կարող բավարարել մեզ: Ողանավերի տեսակների հարաբերակցութիւնը մեր ավիացիայի մեջ ձեռնտու չեր: Շատ բարձր էր հետախույզ ինքնաթիռների տեսակարար կշիռը վոչ թե նրա համար, վոր անհրաժեշտութիւն, այլ, կարիք ունեինք, վորովհետև այլ ողանավեր մենք համարյա չգիտեինք կառուցել: Մենք համարյա չունեինք ումբակոծող ավիացիա,

չատ քիչ ունեյինք կործանիչներ: Անհրաժեշտ էր ստեղծել ավիացիայի զանազան տեսակներէի ավելի կանոնավոր և նպատակահարմար հարաբերակցություն մեր ողային ուժերի ներսում: Հարկավոր էր միջոցներ ձեռք առնել, վոր արդյունաբերությունը մեզ տար վոչ թե այն, ինչ վոր կարող էր, այլ այն ինքնաթիռները, վորոնք հարկավոր են մեզ, նախ և առաջ՝ մարտական, ակտիվ ավիացիա—ծանր ուժակոծներ, կործանիչներ, գրոհիչներ:

Բացի դրանից, մեր ավիացիան իր վորակական ցուցանիչներով բավական հիմնավորապես էր յետ մնում իր բուրժուական «յեղբայրակիցներից», յետ էր մնում մի քանի տարով, իսկ ինքնաթիռի համար դա շատ մեծ ժամանակամիջոց է:

Ընկ. Մտալինը հատուկ ուշադրությամբ հետևում էր մեր ռազմողային ուժերի հագեցվածությանն ու նրանց վիճակին:

Նա հանգիստ չէր տալիս վոչ Սերգոյին, վոչ Կազանովիչին, վոչ Պոստիչեվին, վոչ էլ այդ ժամանակներն այդ գործի համար պատասխանատու մյուս ընկերներին, էլ չեմ խոսում մեր, մեղավորներին մասին, և թափանցելով գործի բոլոր մանրամասնությունների մեջ, առանձնապես արագ տեմպեր էր պահանջում մեր ավիացիայի վերակառուցման ասպարիզում:

Կուսակցութեան 16-րդ համագումարից հետո անցած ժամանակամիջոցում մեր ռազ-

մածովային ուժերն անհանաչելի դարձան: Մենք ստեղծեցինք ռազմական հզոր թանր ավիացիա, կարողացանք բարելավել ավիացիայի մյուս բոլոր տեսակները:

Չգալիորեն բարելավվեց մեզ ցանկալի ուղղությամբ ինքնաթիռների տեսակների հարաբերակցությունն ողային ուժերի կազմում:

Անվիճելի յեն մեր հսկայական նվաճումներն ավիոչինարարության ասպարիզում, բայց հարկավոր է վորոշ բաներով լրացնել ու բարելավել մեր ավիացիոն արդյունաբերությունը, առաջին հերթին՝ մոտորների արտադրությունը: Մոտորաչինությունը շատ բարդ արտադրություն է, թերևս մեր մեքենաչինության ամենադժվարին մասն է: Մենք ստեղծեցինք նոր, հիանալի մոտորաչինական գործարաններ: Այժմ մեր արդյունաբերությունը արտադրում է շատ մոտորներ. բայց վորպեսզի մեր ավիացիայի վոչ մի բնագավառը չզիջի ոտարեկրյա լավագույն տիպարներին, հարկավոր է մեր ինքնաթիռները լիովին ապահովել համապատասխան վորակի մոտորներով:

Պետք է ավելի արագորեն յուրացնել նոր, կատարելագործված մոտորների արտադրությունը: Պետք է առաջ մղել մեր դիտահետազոտական ինստիտուտների աշխատանքը մոտորների ասպարիզում: Անպայման պետք է

չանդրադառնալ մեր մարդկանց վրա, նրանց ուսուցման վրա, ռազմական գործողութիւններ կատարելու պրիոմներ մշակելու գործի վրա, ապա հասկանալի յե դառնում, թե ինչո՞ւ յես այսոր մեր բանակն անվանում եմ սկզբունքորեն այլ, նոր բանակ:

Իմ հաղորդումը լրիվ չէր լինի, յեթե յես կանգ չառնեյի այն մեծ աշխատանքի վրա, վոր կատարել ենք մենք Խորհրդային Միութեան պաշտպանութիւնն ուժեղացնելու մի քանի ոժանդակ ձեռնարկումների բնագավառում: Յես աչքի առաջ ունեմ ամրացված շքրջանները, վորոնցով մենք արդեն պատել ենք վոչ միայն մեր արևմտյան սահմանը՝ Լադոգայի լճից մինչև Սև ծովը, այլև մեր սահմանի ամենից ավելի սպառնալիքի յենթակա ուղղութիւնները՝ մեր Հեռավոր Արևելքում և Արևելյան Սիբիրում: Յես նկատի ունեմ նաև մեր կատարած զգալի աշխատանքը ԽՍՀՄ-ի արիերի ամրացման ասպարիզում, Սև ու Բալթիկ ծովերում, Մուրմանսկի շրջանում, մանավանդ Հեռավոր Արևելքում: Այդ ամբողջութիւններն զգալի դժվարութիւններ են ներկայացնում այն ավանտյուրիստների համար, վորոնք ցանկութիւն կունենան հարձակում գործելու խորհրդային հողի վրա:

Խորհրդային Միութեան պաշտպանունակութիւնն ամրացնելու այն վիթխարի աշխատանքում, վորը կատարվում է կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարութեամբ և

ոգնութեամբ, մենք չէյինք կարող սահմանափակվել միմիայն ցամաքային ուժերով ու ավիացիայով:

Ընկ. Ստալինի մշտական անմիջական մասնակցութեամբ և ղեկավարութեամբ մենք աշխատում ենք մեր ռազմական ծովային ուժերի ուժեղացման վրա, ուժեր, վորոնք շատ մեծ նշանակութիւն ունեն բազմահազար կիլոմետր ծովային բաց սահմաններով մեր յերկրի պաշտպանութեան համար: Մեր մեջ ասած՝ այդ գործում քիչ ծանրաբեռնում չունի նաև ընկ. Սերգոն:

**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՄՔԸ**  
 Հաշվետու շրջանում (կուսակցութեան 16-րդ համագումարից մինչև 17-րդ համագումարը), մի կողմից՝ յերկրի ինդուստրացման, ՄՏԿ-ների ու խորհանտեսութիւնների կազմակերպման կապակցութեամբ, վորոնք բանվոր դասակարգի բուռն աճում առաջացրին, և, մյուս կողմից՝ շնորհիվ Կարմիր բանակի տեխնիկական հագեցման, Կարմիր բանակն զգալիորեն փոխեց իր սոցիալական դեմքը, ըստ վորում հատկապես զգալի կերպով աճեց նրա բանվորական շերտը:

	Բանվորներ	Գյուղացիներ	Մասայողներ
Ա. 1 հունվ. 1930 թ.	31,2 տոկ.	57,9 տոկ.	10,9 տոկ.
Ա. 1 հունվ. 1934 թ.	45,8 »	42,5 »	11,7 »

Դրա հետ միասին՝ գյուղատնտեսութեան

կուլեկտիվացումը վորակապես փոխեց կարմիր բանակային-գյուղացու դեմքը: Այժմ արդեն կարմիր բանակային-գյուղացիների ավելի քան յերեք քառորդ մասը կոլտնտեսականներ են: Առ մեկն հունվարի 1930 թվի կոլտնտեսական կարմիր բանակայինները յեղել են միայն 5,3 տոկոս, իսկ այժմ նրանց տոկոսը հասել է 76,7-ի:

Այսպիսով բանվոր դասակարգն ու կոլտնտեսային գյուղացիությունը ներկայումս բանվորագյուղացիական կարմիր բանակի անձնակազմի ճնշող մեծամասնությունն են կազմում:

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԵՐՏԸ**

Այս ժամանակամիջոցում անել է կարմիր բանակի շարքերի կուսակցական ու կոմյերիտական շերտը:

	Համ(ր)կ անդամներ յիվ թեկնածուներ	Համ կԿՑԵՄ անդամ ներ, որոնք կուսակց ուրբյան անդամ չեն
Առ 1 հունվ. 1930 թ.	15 տոկ.	18,4 տոկ:
Առ 1 հունվ. 1934 թ.	23,6 >	23,9 >

Ըստ վորում պետք է հաշվի առնել, վոր զտման կապակցությամբ վերջին տարվա ընթացքում բոլորովին ընդունելություն չի յեղել կուսակցության մեջ: Դրա համար 1933 թվականի զորակոչի մեջ կոմունիստների տոկոսը համեմատաբար պակաս եր: Այնուամենայնիվ Բանվորագյուղացիական կարմիր բանակի կու-

սակցական ու կոմյերիտական շերտն ամբողջությամբ վերցրած հասնում է համարյա 50 տոկոսի:

Այս չոր թվերի հետևում (25,6 տոկոս) թաղնված է, ինչպես այդ հաստատվեց զրտման ընթացքում, մեր կուսակցության գաղափարապես ամենից ավելի կայուն ու կոմիված ջոկատներից մեկի գոյությունը:

**ՊԱՅԳԱՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԶԱՄԱՐ**

Սոցիալիստական կուլտուրան, բանվորագյուղացիական բանակի մարտիկների ու պետկազմի կուլտուրականությունը կարևորագույն պայման և նախադրյալ է բանվորագյուղացիական բանակի մարտական, քաղաքական, մասնագիտական ու ռազմատեխնիկական պատրաստությունն էլ ավելի բարձրացնելու համար: Այդ տեսակետից ուժեղ աշխատանք է կատարվել և կատարվում է: Լրիվ միջնակարգ կամ բարձրագույն կրթություն չունեցող ամբողջ պետկազմն այժմ պարտադիր կերպով պետք է անցնի ընդհանուր կրթական պատրաստություն: Քաղաքական կազմը պարտավոր է յուրացնել ռազմական գիտելիքների դասընթացը՝ իր տեսակի գործասի նորմալ դպրոցների ծրագրով:

Պետկազմի տեխնիկական կուլտուրան բարձրացնելու նպատակով, մենք ամբողջ պետկազմի համար սահմանել ենք գիտելիքնե-

րի տեխնիկական միջնակարգ և պահանջում ենք, վոր ամեն մի հրամանատար պատշաճ չափով յուրացնի տեխնիկական այդ միջնակարգը: Ապա մենք գործադրում ենք մի շարք ձեռնարկումներ՝ մեր ակադեմիաներում և դպրոցներում ուտար լեզուների պարտադիր ուսումնասիրումն արմատացնելու համար: Այսուհետև վոչ մի դպրոց, մանավանդ վոչ մի ակադեմիա, իրավունք չունի տալ այնպիսի շրջանավարտ հրամանատար, վորը չի տիրապետում ոտար լեզուներից մեկին:

Դրա հետ միասին, մենք վոչ մի ջանք չենք խնայում կազմակերպելու կարմիր բանակայինների և ամբողջ պետկազմի Ֆիզիկական պատրաստութունը, այնպես, վոր ամբողջ կարմիր բանակը ներկայացնի ամրակուռ, դիմացկուն, Ֆիզիկապես գեղեցիկ մարզկանց կոլեկտիվ:

Յես չեմ ուզում հոգնեցնել ձեր ուշադրութունը մանրամասնորեն թվարկելով այն բազմաթիվ ձեռնարկումները, վորոնք գործադրել ենք մենք կարմիր բանակի կուլտուր-լուսավորական աշխատանքի գծով: Այստեղ ներկա գտնվողներից մեծ մասին հայտնի յեն այդ ձեռնարկումները:

Յես կմատնանչեմ միմիայն դրանցից մի քանիսը:

Ընդարձակվեց թե կարմիր բանակայիններին և թե պետկազմին ու նրանց ընտանիք-

ներին սպասարկող կուլտ-լուսավորական հիմնարկների ցանցը:

	Լեռնակյուց	Ակումբներ	Կարմիր բանակի տներ
Ա. 1 հունվ. 1931 թ.	8,030	853	97
Ա. 1 հունվ. 1934 թ.	15,096	1,336	142

Ավեացել է քաղլուսաշխատանքի բյուջեն: 1929—30 թ.թ. կազմում եր 8,3 միլիոն ուրբլի, 1934 թվականին՝ 72 միլիոն ուրբլի:

Կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցի աճման հետ միասին, ավելացել է նաև քաղաշխատանքի տեխնիկական միջոցների թիվը:

Թ. Վ	Բազմա- անդամ ներ	Երջիկ նազիր	Երջիկ կին	Մշակա- կան կլին	Երջիկ խոսող կին	Մշակա- կան կլին
1930	240	800	534	946	1	8
1933	1366	4800	3425	1540	51	276

Այս բոլորի շնորհիվ կարմիր բանակայինը բացառիկ հնարավորութուններ է ստանում կուլտուրական աճման համար:

Զգալի յե Բանվորազյուղացիական կարմիր բանակում գեղարվեստական աշխատանքի աճումը թե կարմիր բանակային ինքնագործունեյության հիման վրա և թե ԲԳԿԲ-ի գեղարվեստական սպասարկմամբ, վոր լայնո-

քեն իրականացնում է Գեղաշխի Միությունը շեֆության կարգով:

1933 թվականին բանակում կային ավելի քան 2800 գեղարվեստական խմբակներ ու կուլեկտիվներ (աճումը, համեմատած 1930 թ. հետ՝ 150 տոկոս): 1933 թվականին Գեղաշխը Կարմիր բանակն է գործուղել 87 գեղարվեստական և 24 հրահանգչական բրիգադ:

Հատուկ Հեռավոր Արևելյան Կարմրադրոշ Բանակին սպասարկելու համար առանձնացվել է ժողովրդական և վաստակավոր դերասանների յերկու բրիգադ:

1933 թվականին Բանվորագյուղացիական Կարմիր բանակում աշխատում էր 25 թատրոն, վորոնց գլխավորում էր Կարմիր բանակի Կենտրոնական թատրոնը: Լայն ծավալվեց կարմիր բանակային գրադարանների աշխատանքը. Բանվորագյուղացիական Կարմիր բանակի կազմի ավելի քան 75 տոկոսն ոգտվում է կարմիր բանակային գրադարաններից, մինչդեռ արհմիութենական գրադարաններն ընդգրկում են առայժմ բանվորների միայն 38 տոկոսը: Զգալիորեն ավելանում է ռազմական-տեխնիկական գրականության ընթերցանությունը, իսկ վերջին ժամանակներս բարձրանում է գեղարվեստական գրականության ընթերցումը:

Բացի պարտադիր ընդհանուր կրթական պատրաստությունից, հրամատարների ու կարմիր բանակայինների կուլտուրական պա-

հանջները բավարարելու համար հսկայական աշխատանք են կատարում Կարմիր բանակի տներն ու ակումբները:

Ընդհանուր կրթական խմբակների թիվը հասնում է հազարների, կարդացված դասախոսությունների, կատարված եքսկուրսիաների թիվը՝ տասնյակ հազարների, վորով մի մարդուն միջին հաշվով ընկնում է տարեկան մինչև 20 դասախոսություն, ղեկուցում և եքսկուրսիա:

Դասախոսություններ կարդայու, պետկազմի հետ պարապելու համար ոգտագործվում են յերկրի լավագույն գիտական ուժերը՝ ակադեմիկոսներ, պրոֆեսորներ, ճարտարագետներ:

## ՆՈՐ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄՆԵՐԻ Ա.ԼԻՔԸ („ՊՐԱՎԴԱՅԻ“ 1934 թ. ՂՈՒՆՎԱՐԻ 8-Ի №ՈՒՍ ՏՊՎԱԾ՝ ԸՆԿ. ՌԱԴԵԿԻ ՂՈԴՎԱԾԻՑ)

«Աշխարհի նոր վերաբաժանման համար պայքարի պատրաստությունը վերջ գրեց ղինաթափման խաղերին, վորոնց նպատակն էր համոզել ժողովրդական մասսաներին, պատերազմի վտանգի բացակայության մեջ: Ընդհակառակը, բոլոր բուրժուական կառավարություններն այժմ մրցում են ապացուցելու համար պատերազմի վտանգի գոյությունը: Բոլոր իմպերիալիստները բացահայտ կերպով որակարգում գրել են սպառազինումների հարցը:

Նոր սպառազինումների ալիքը բարձրանում է յերկու համաշխարհային կենտրոններում—Յեվրոպայում և Հեռավոր Արևելքում: Սպառազինումների այդ առանձին կենտրոնները ստեղծում են մի ալիք, վորը խաղաղության նավը կհասցնի նոր համաշխարհային պատերազմի, յեթե պրոլետարիատին չհաջողվի ստեպել կապիտալիստական պետություններին դադարեցնելու այդ խաղը: Նայենք առանձնապես սպառազինումների յեվրոպական և հեռավոր արևելյան կացությանը:

### ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄՆԵՐԸ

Գերմանական իմպերիալիզմը համաշխարհային պատերազմում հաղթած պետություններին վերջնազիր է առաջադրում— կամ նրանք զինաթափվում են, կամ ել ինքը՝ Գերմանիան սպառազինվում է: Հարցի այդպիսի դրումը գերմանական իմպերիալիստներին թույլ է տալիս հաստատելու, թե նրանք դեմ են սպառազինումների, բայց իբր այն հանգամանքը, վոր ուրիշները հրաժարվում են զինաթափվել, թույլ չի տալիս գերմանական նացիոնալ-սոցիալիստներին լիովին դրսևորվելու իրենց խաղաղասիրական բնությունը: Գործնականապես Գերմանիան վերջին տարիներում տարել է սպառազինման քաղաքականություն: Այդ փաստն անվիճելի յե: Վիճելի կարող են լինել միայն Գերմանիայի նվաճումներն այդ ասպարիզում:

Յրանսիական գլխավոր շտաբի նախկին պետ՝ գեներալ Դեբենեյը նոյեմբերի 23-ի իր զեկուցման մեջ (վորը տպագրվել է «Ազգային վերածնության հանձնաժողովի» կողմից հրատարակվող «Կայեյում») հետևյալ գնահատականն է տալիս գերմանական սպառազինումների ներկա կացությանը: Նա գտնում է, վոր ռեյխսպետը վերսալյան պայմանագրով թույլ տրված 100 հազարի փոխարեն փաստորեն ունի 200 հազար վարժեցված զինվոր. այսպես կոչված պաշտպանական վոստիկանությունը, վորը պահվում է զորանոցներում և վարժեցվում է գեներլ բոլոր տեսակների գործադրումով, հաշվվում է 157 հազար: Նա իրենից ներկայացնում է կանոնավոր բանակ, և անհրաժեշտության դեպքում կմտցվի բանակի կազմի մեջ, իսկ այդ ժամանակ վոստիկանական Փունկցիաները կկատարեն զրոհայինները: Այսպիսով կանոնավոր բանակը, վորը կարող է ռազմական ուժերի ծավալման կենտրոն լինել, գեներալ Դեբենեյը հաշվում է 350 հազար մարդ:

Այնուհետև Դեբենեյը գտնում է, վոր 120 հազար մարդուց բաղկացած «պաշտպանական ջոկատները» իրենցից ներկայացնում են ռազմականապես վարժեցված յերիտասարդություն, վորն այս կամ այն ձևով ռեյխսպետում անցնում է վորոշ ստաժ: Գրոհային ջոկատները, վորոնցում կան միլիոնից վոչ պակաս մարդիկ, միատեսակ ռազմական արժեք չունեն:

նեն, թեպետ նրանք բոլորն էլ սովորել են ուս-  
խալների սպաների ողնությամբ: Բայց նրանք  
իրենցից ներկայացնում են մի նշանակալից կո-  
րիզ՝ ուղղակիանապես պատրաստված մարդ-  
կանց, վորոնք պատերազմի դեպքում մտցվե-  
լով՝ ուսխալների շրջանակներին մեջ՝ կարճ ժա-  
մանակամիջոցում կդառնան վարժված զինվոր-  
ներ: Գրոհայինների տեխնիկական մասերը,  
ինչպես և նրանց ավտոմոբիլային կորպուսը,  
ուղաչունների եսկադրիլիան, իրենցից ներկա-  
յացնում են ուղղակիանապես վարժված ուժեր:

Ինչ վերաբերում է գերմանական բանակի  
նյութական մասին, ապա գեներալ Դեբենեյը  
գտնում է, վոր պատերազմի արդյունաբերա-  
կան բազան լիովին պատրաստված է: Յունկեր-  
սի, Գայնկելի, «Բայլիշե Վերկեյի» և այլ ա-  
վացիոն գործարաններն ունեն ամսական 2-500  
սավառնակի արտադրական կարողություն:

Միաժամանակ բոլոր գծերով տեղի ունի  
լենահզուժյան բարոյական ուղղակիանացում:

Գերմանիան մյուս իմպերիալիստական  
պետուժյուններին կանգնեցրեց արդեն կա-  
տարված նշանակալից սպառազինումների  
փաստի առաջ: Նա այժմ ձգտում է լեզալաց-  
նել այդ սպառազինումները, գտնելով, վոր,  
յեթե իմպերիալիստական պետուժյունները  
սպառազինման փաստին (վորը չի կարող  
նրանց հայտնի չլինել) պատերազմով չպա-  
տասխանեցին, ապա նրանք պատերազմով չեն

պատասխանի նաև սպառազինումների լեզա-  
լացման փաստին:

Ֆրանսիայի տիրապետող դասակարգերի  
բանակում լուրջ պայքար է տեղի ունենում  
գերմանական սպառազինումների նկատմամբ  
ուսնենալիք վերաբերմունքի շուրջը: Ֆրանսիա-  
յում վոչ վոք հնարավոր չի համարում այդ  
սպառազինումներին պատերազմական դործո-  
ղուժյուններով սքատասխանելը: Գործնակա-  
նում գոյուժյուն ունեն քաղաքականուժյան  
միայն յերկու վարիանտ: Մեկը հանգում է գեր-  
մանական հետագա սպառազինումները պայ-  
մանազերով կաշկանդելու փորձերին, դրա  
համար պարտավորուժյուններ ընդունելով  
Ֆրանսիական սպառազինումների նկատմամբ:  
Մյուսը գտնում է, վոր վտանգավոր է մխի-  
թարվել Գերմանիային կաշկանդելու հնարա-  
վորուժյան հույսով, վոր ամենախելացի բանը  
կլիներ— գերմանական սպառազինումներին  
պատասխանել Ֆրանսիական դաշնակցային  
սխտեմների ուժեղացումով և Ֆրանսիական  
սպառազինումների ուժեղացումով:

Նոր սպառազինումների կամպանիան համե-  
մատաբար ավելի լայն չափեր է ընդունում  
Անգլիայում: Անգլիական Ֆինանսական կա-  
պիտալի ամբողջ այն մամուլը, վորն է նկատի  
ունի լայն մասսաներին, անզուսպ ազիտացիա-  
յե մղում. ապացուցելով, վոր անգլիական իմ-  
պերիալիզմը սպառազինումների ասպարիզում  
յետ է մնացել՝ մյուս պետուժյուններից:



Անգլիայի կողմից արդեն արվել են առաջին քայլերը ծովային նոր սպառազինումների ապարիզում: Հենվելով այն բանի վրա, վոր Ամերիկայի Միացյալ Նահանգները մեծ հաժանավեր են կառուցում, ծովակալության առաջին լորդ՝ սեր Բոլտոն Եյրես—Մոնգելը նոյեմբերի 14-ին հայտարարեց, թե Անգլիան կկառուցի նոր տիպի հաժանավեր՝ 9 հազար տոնն տարողությամբ, ավելացնելով սպառազինումները:

Բայց միաժամանակ մեծ կամպանիա յե ծավալվում ողային նավատորմն ուժեղացնելու համար, վորպես Անգլիայի «պաշտպանության» գլխավոր և նոր զենք:

Անգլիայում սպառազինումներն (ուժեղացնելու ազիտացիան պարզ լույս ե սփռում ամբողջ միջազգային դրության վրա: Նացույց ե տալիս, վոր անգլիական իմպերիալիզմը խոսքով դեռևս միջնորդի դեր խաղալով, գործնականում յեղնում ե մոտակայում բոլոր հարցերը պատերազմի ոգնությամբ «լուծելու» հավանականությունից:

Ճապոնական ռազմական կուսակցությունը պնդում ե, թե 1935 թիվը—Վաշինգտոնի համաձայնագրի վերջանալու տարին—հանդիսանում ե ճապոնական կայսրության համար անմիջական վտանգի տարի: Այդ պնդումը, անկասկած, իրենից ներկայացնում ե մի վարագույր, վորի ոգնությամբ ռազմական կուսակցությունը հարձակում ե նախապատրաստում

Խորհրդային Միության դեմ, ըստ վորում նա այդ հիմնավորում ե վոչ միայն կուլիաների հետևում, այլև բացահայտորեն, մամուլում, հայտարարելով, թե Ամերիկայի Միացյալ Նահանգների դեմ պատերազմելու համար հարկավոր ե նախորոք ամուր թիկունք ստեղծել ասիական մայր ցամաքում:

Բայց կասկածի յենթակա չի, վոր վաշինգտոնի համաձայնագրի ուժի մեջ լինելու ժամանակամիջոցն անցնելուց հետո սպառազինումների համար ամենասուր պայքար կառաջանա Արևելքում, յեթե ճապոնական ռազմամուլությունը դեռ մինչ այդ աշխարհը չկանգնեցնի պատերազմի սկսման կատարված փաստի առաջ:

Ինչպիսի՞ն ե ուժերի իրական փոխհարաբերությունը Հեռավոր Արևելքում:

Վաշինգտոնի համաձայնագիրն ստորագրելուց առաջ Ամերիկյան ծովային նավատորմը 1.289.463 տոնն ջրատարողությամբ նավատորմ եր՝ ընդդեմ 1.960.480 տոնն անգլիականի և 526.689 տոնն ճապոնականի: Բայց միաժամանակ ՀԱՄՆ աշխատում և պատրաստվում եյին կառուցել 734.926 տոնն՝ ընդդեմ մեծ Բրիտանիայի 215.380 տոննի և Ճապոնիայի 805.188 տոննի: Այսպիսով հեռանկարում ՀԱՄՆ պետք ե ունենային 2.024.389 տոնն, ընդդեմ Մեծ Բրիտանիայի 2.075.860 տոննի և Ճապոնիայի 1.333.877 տոննի: Յե՛վ Անգլիայի

և՛ Ճապոնիայի ուժերից վեր եր Ֆինանսական մրցությունը ՀԱՄՆ-ի հետ: Իրա համար ել նրանք համաձայնեցին Վաշինգտոնի փոխհարաբերությանը և Լոնդոնի համաձայնագրին, վորը վորոշում եր ոժանդակ նավատորմի փոխհարաբերությունը: Այդ համաձայնությունների հիման վրա վերոհիշյալ յերեք մեծ պետությունների նավատորմները պետք ե հետևյալ հարաբերությունն ունենային.

Նավերի տեսակները	ՀԱՄՆ	Մեծ ԲՐԻՏԱՆԻԱՆ	ՃԱՊՈՆԻԱՆ
	Ջրատարողություները տոններով		
Գծային նավեր . . . . .	825,000	525,000	315,000
Ավեակերներ . . . . .	135,000	135,000	81,000
Հածանավեր Ա . . . . .	180,000	146,000	108,400
„ Բ . . . . .	143,000	192,200	100,450
Սուզանավեր . . . . .	52,700	52,700	52,700
Եամենեցիներ . . . . .	150,000	150,000	105,500
Ընդամենը . . . . .	1,186,200	1,201,700	763,050

Այդ ծրագիրը լրիվ չկատարվեց: ՀԱՄՆ հավատարյով իր Ֆինանսական գերակշռությանը, իր Ֆինանսական ուժի ոգնությամբ հակառակորդներին նեղելու հնարավորությանը, համեմատաբար ավելի հետ մնացին նշված ծրագիրը կատարելու գործում: Ծրագիրը կատարելու գործում ամենից ավելի առաջ գնաց Ճապոնիան: ՀԱՄՆ չկարողացան նորերով փոխարինել 270 հնացած միավորներ, Մեծ Բրի-

տանիան —145, իսկ Ճապոնիան նավատորմի նավակազմը համարյա լիովին փոխարինեց նորերով:

Սակայն, ինչպես Գանգոն Բուլդոլինն է գրում «Նյու-Յորկ Թայմզ» թերթում դեկտեմբերի 17-ին, «Յեվրոպայում Հիտլերի իշխանության գլուխ անցնելը և Հեռ. Արևելքում Ճապոնիայի գիևված յեղույթը գարկ տվին ծովային սպառազինումներին»: ՀԱՄՆ-ում ազիտացիա սկսվեց, վորն աշխատում եր ցույց տալ, թե ամերիկյան սպառազինումներն անբավարար են և՛ ցամաքում, և՛ ծովի վրա: Ցամաքային ուժերի շտաբի պետ՝ Մակ Արտուրը հայտարարում եր, թե «ամերիկյան բանակը, նրա կազմը, նրա նյութական ապահովությունը, գործողությունների համար նրա պատրաստականությունը չեն գտնվում վտանգի բարձրության մակարդակի վրա»: Նույնն է պնդում նավատորմի մասին ռազմա-ծովային ուժերի շտաբի պետ Ստենլին: Նախագահ Ռուզվելտը, վոր Վիլսոնի կառավարության որոք ծովային մինիստրի տեղակալն եր, վճռականապես արտահայտվեց հոգևու Վաշինգտոնի և Լոնդոնի համաձայնագրերով սահմանված լիմիտներին հասնելուն: Հասարակական աշխատանքների համար նշանակված Փոնդերից մոտ քառորդ միլիարդ դոլլար պետք ե հատկացվի 32 նոր նավերի կառուցման համար, չհաշված նարդեն առաջ վորոշված կառուցումները:

Ընդհանուր առմամբ Ամերիկյան մոտիկ ժամանակներս պետք է կառուցի 52 նոր նավ: Յոթ և կես միլիոն դոլլոր հասկացված է 130 նոր սավառնակ կառուցելու համար: Ծովային ուժերի շտաբի պետ Ստենլին 67 միլիոն դոլլար է պահանջում արդեն հնացած նավերի մոդառնիզացիայի համար:

Սպառազինումների թափերի արագացումը պաշտպանող շրջանները նշում են, վոր այդ ծրագրով էլ ՀԱՄՆ-ին 1936 թվին կպակասեն Վաշինգտոնի և Լոնդոնի համաձայնագրերով թույլ տված 100 միավորներ: Նավատորմը նոր և մեծ ծրագիր է մշակում, վորը պետք է իրագործվի մինչև 1939 թվը: Ծովային մինիստր Սվենսոնը հայտարարում է, թե «հասել է ժամանակը, յերբ ՀԱՄՆ այլևս չեն կարող իրենց որինակով գինաթափման ձգտել»:

Ճապոնիան, վոր իր նավատորմը հասցրել է պայմանագրային լիմիտների 95 տոկոսին, աշխատում է արագացրած թափերով վոչ միայն մինչև վերջ սպառել այդ լիմիտները, այլև մոտիկ ժամանակներս նախապատրաստել նոր նավատորմի կառուցումը, վորը պետք է շատ առաջ անցնի Վաշինգտոնի և Լոնդոնի սահմանափակումներից: Նա յենթադրում է նոր բանակցությունների ներկայանալ արդեն իրագործման պրոցեսում գտնվող մեծ ծրագրով: Հենվելով այդ ծրագրի վրա, Ճապոնիան ՀԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից կպահանջի

ուժերի հավասարություն՝ ծովի վրա: Դրա համար էլ Ճապոնիայի նավատորմի շրջանները 1934-35 թ. թ. պահանջել են 680 միլիոն իեն՝ նոր կառուցումների համար: Այդ գումարները կառավարության կողմից մի քիչ կրճատվեցին, բայց չնայած դրան, սկսվում է 2 ավիակիրների և 14 կործանիչների կառուցումը, վորը պետք է ավարտվի 1937 թվին: Դրան պետք է ավելացնել ծովային ավիացիայի 8 եսկադրիլա: Այստեղ չեն մտնում նաև մի ամբողջ շարք կառուցումներ, վորոնք թույլատրված չեն պայմանագրով:

Միաժամանակ շարունակվում են ուղիղ ժողովային բազաների ուժեղացման փորձերը: Հեկտոր Բայուստերայի հայտարարությամբ («Դեյլի Տելեգրաֆ», 5 դեկտեմբերի) Ճապոնիան կուկայդոյում ավիացիայի և սուզանավերի համար նոր բազաներ է կառուցում, վորոնք ուղղված են Ալյասկայի կողմից գործող ամերիկյան նավատորմի դեմ: Նա ակրոգրոմ է կառուցում Մայպան կղզու վրա, վորն ընկած է Հուամի ամերիկյան բազայի թևում և այլ յենթամանդատային կղզիներում: Նույն տեղեկություններով, ՀԱՄՆ շարունակում են ամբացնել Պերլ-Գարբորը՝ Հավանայի կղզիներում, և նախապատրաստում են Ալեուտի կղզիների ամրացումը:

Այսպիսով առկա յե նոր, ամենալուրջ սպառազինումների սկիզբը իրազարկ ովկիանոսում: Պատերազմական տրամադրությունն ա-

նում է վոչ միայն ռազմական շրջաններում,  
այլև Ֆրանսիական կապիտալի ավանտյուրիս-  
տական շրջաններում:

Ռազմական ազիտացիայի և սպառազինում-  
ների այլքը բարձրանում է ամբողջ աշխար-  
հում: Այդ փաստը լրարեքն է նոր փոթորիկնե-  
րի, վորոնց պետք է պատրաստվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԶԵԿՈՒՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ընկ. Մտայինի Հաշվետու զեկուցումը  
ՀամԿԿ(Բ) 17-րդ համագումարում:

2. Ընկ. Վորոշելովի ճառը ՀամԿ Կ(Բ)Կ  
17-րդ համագումարում:

3. Յերկրորդ հնգամյակի խնդիրները (ընկ.  
ընկ. Մորոտովի և Կույբիչևի զեկուցումները  
Համ ԿԿ(Բ) 17-րդ համագումարում:

4. Համ ԿԿ (Բ) Կոմիտեերնի պատգամա-  
վորության հաշվետվությունը (Մանուիլսկու  
զեկուցումը Համ ԿԿ(Բ) 17-րդ համագումար-  
ում):

5. ՀամԿԿ(Բ) 17-րդ համագումարի վորո-  
շումները:

6. Կոմիտեերնի գործկոմի 13-րդ պլենումի  
վորոշումները:

7. Պարտադիր զինվորական ծառայության  
որենքը:

8. ԲԳԿԲ զինծառայողների արտոնու-  
թյունների որենքը:

50

1948 08 08



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՎԵՐՈՒՄ ԵՎ ԴՆՊԱՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0936488

1934թ. - 541

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

1

3458



Призыв 1912 года провести отлично  
Материал для докладчиков  
Гиз. ССР. Армении, Эривань, 1934 г.